Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Luu
535, 543, 544, 545,
546

№ 951.
Ш 5
и 3
№ 873-3

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

№ 543

(10797-57) 543-2009

Լաս
543

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ

ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳՍԻ

ՀՕՐԱՎԱՐԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

Ի ՆԵՐՍԵՍԷ

ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Տպարանի Մխիթարեանց

ՌՃԳ — 1854

ԹՈՒՂԹ

ԱՌ Ի ՆԵՐՍԻՍԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ

ՑԵՂԲՕՐԷ ՑԵԱՌՆ

ԳՐԻԳՈՐԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՑ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՑՆ

ԳԵՈՐԳԵԱՑ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԱՌԱՋՆՈՐԴԻ

ՍՐԲՈՑ ՈՒԽՏԻՆ ՀԱՂԲԱՏԻ

ՑԱՂԱԳՍ ՀԵՏԱՋՕՏԵԼՈՅ

ԱՌ Ի ՍՏՈՒԳՈՒԹԻՒՆ

ԶՊԱՏՄՈՒԹԻՒՆՍ

ԵՐԱՆԵԼԻՈՅ

ՆԱՀԱՏԱԿԻՆ ՍԱՐԳՍԻ

ՈՐՈՑ բաղձալի է Ճշմարտու-
թիւնն յիրս և 'ի բանս, նոցունց և
յաւէտ ըղձալի խնդրելոյն զնա
փոյթ, իբրեւ ակն պատուականի
և գեղեցիկ մարգարտի ըստ իմաստ-
նոյ վաճառականին. որոյ աղագաւ
ոչ ինչ անխայեն յանհասանելեացն
հասուցն, կամ 'ի յանձին տաժա-
նուցն, կամ 'ի նիւթականաց գոյից
ծախուցն. այլ զոսկեհանայն բե-
րելով զնմանութիւն՝ երկրորդ ըզ-
բովանդակ աշխատութիւնս առ սէր
և յոյս վարկանին փարթամու-
թեանն: Ըստ այսր ապացուցի և
ղքոյդ տեսանեմք պարզական մտաց
լուսաւորութիւն, խոհական մտին
փափաքող, և համատեւից նորին,
որով բանականիս զարդարին մա-
տունք. որ և յոգնաբերղուն պտղոցն
քաղցրագունից առ բարւոյդ ծա-
ռոյդ ամբարուցն 'ի միոյ ատի ծա-

նուցաւ պաղոյ Ճաշակմանէ : Քան-
զի հոգեւորական այս խնդիր բարե-
յաղթ վկային Քրիստոսի սրբոյն
Սարգսի , անՃառ պատմութեանն
քննութիւն առ 'ի գիւտ Ճշմարտու-
թեան , որ 'ի նախնեացն հարց ան-
տես եղեալ մինչեւ ցմեզ , 'ի քէն
միայնոյ շարժեցաւ զմերս զարթու-
ցանել թմբրութիւն 'ի գիւտ այնր
խնդրոյ : Վասն որոյ և մեք ըստ նշա-
նակութեանն առ 'ի ձէնջ տուեցե-
ալոց գրով , զոր և ծանուցաւ ձեզ էր-
բեմն յաղօթական եղբօրն զուցա-
տրութենէ առաքեցաք առ եղբարս
գերահռչակ ուխտին որ յանուն
սրբոյ միայնական Ճգնաւորին Մօր
Պարսամոյի 1 , առ սահմանաւն Մե-
լիտինոյ Հայոց . որպէս զի յարկեղս
մատենից իւրեանց հետազօտեալ
քննեսցեն , և եթէ գոցի նշանա-
կեալն , թարգմանեալ տայցեն մեզ
զնդրեալն : Որոց յօժարական սրբ-
տիւ զառ 'ի մէնջ ընկալեալ խնդրոյ
փոյթ , պատասխանեցին մերոցն
զայս ինչ , եթէ վասն զի առ մեզ հա-
մանման վկայք՝ ջրոք են կոչեցեալք

Սարգիս , ընկերն Բագոսի՝ որ յՌուծափ նահատակեալ. և այլոմն որ յԱմիթ , և մեւս եւս 'ի Տարսայ՝ ուր հնոցն է երից մանկանցն , և զ-ղրավարն Սարգիս հանդերձ որդ-ւոքն 'ի Պարս վկայեալ. արդ զորոյ արդեւք 'ի չորեցունց յայսցանէ խնդրէք ասուգել զպատմութիւն: Եւ մեզ Թէպէտ և այլքն բայց յընկերէն Բագոսի անծանօթ էին , սակայն եբրեւ մոռք ինչ տեսանելով, եԹէ զոր խնդրեմքն՝ ոչ այլ ոք է 'ի սոցունց , բայց զօրավարն անուն՝ որոյ և որդին . վասն որոյ գրեալ առ նոսա կրկին անգամ , զնորայն յանուանէ խնդրեցաք Թարգմանել զվկայութիւն . և նոցա ընկալեալ զառ 'ի մէնջն ցուցեալ անուն , և Թարգմանեալ՝ որքան էր կարողութիւն , ջերմեռանդն սիրով 'ի ձեռն որուն խմաստնոյ 'ի նոցանէ Մի-քայէլ անուն , աղօտաբար զմեր գիտողի դպրութիւն՝ առաքեցին առ մեզ. որ Թէպէտ և 'ի յարմարութիւնս բանից և 'ի շաղկապս բառից ոչ զուգիւր ըստ մերումն լեզուոյ ,

սակայն զբնութիւն բանին և զկարգ պատմութեանն ամբողջ ունէր յինքեան։ Զոր և մեր ընկալեալ, և ըստ չափոյ զօրութեան յղկեալ ըզդուրս բանիցն և զպատմողականն՝ առաքեցաք ձեզ և հանուրց եկեղեցեաց Հայաստանեաց՝ գանձ երկնային և հոգեւոր, որ ծածկեալ էր յայլալեզու ազգաց։ և այժմ յայտնեցաւ շնորհօքն Քրիստոսի 'ի ձեռն քոյին խնդրոյ պատուականդ 'ի գլուխս եկեղեցւոյ Գէորգէոս։ Զոր և քո առեալ սերմանեսցես որպէս զբանն սերմանող բանին ընդ ամենայն տեղիս, ուր կարդան զանուն տեառն, և կատարեն հանդիսաւոր ոճնախմբութեամբ զյիշատակ սրբոյ վկային։ Որովք ազատեսցին միտք խմաստուն լսողաց 'ի տարբերական կրից թերակատար այնր պատմութեան։ Յորմէ ոչ ժամանակ, և ոչ տեղի, և ոչ թագաւոր, և ոչ՝ թէ յորմէ ազգէ, և կամ ուստի և յինչ պատճառէ յայսքան եկն յառաջադիմութիւն, մինչ զի տարեւոր պա-

տուել զնա տօնիւք և ժողովովք, ծանուցեալ լինի։ Նա և ոչք հակառակաբարն բերին Յոյնք և Վիրք ընդ վկայիս Աստուծոյ, և ընդ մեզ առաստելականս ի մն յօդեալ վասն սորին բաջաղանս, 'ի ստուգելն զի-ին Ճշմարտութիւն, թէ ո՛վ արդեւք սա ի՞նչ, զղջացին, կամ՝ ըմբերանեսցին։ Եւ մեզ յաղագս յայտնութեան Ճշմարտադունի պատմութեանս փութոյ և երկոց վարձ փոխարինի 'ի ձէնջ և յամենեցունց այս տացի, թողութիւն մեղաց 'ի յիշատակի երանեալ վերկայիս հայցել վասն մեր 'ի տեառնէ. զնոյն ինքն՝ վասն որոյ բանս է, բարեխօս ունել ընդ մերոյ փրկութեան։ Եւ արդ սկսցուք 'ի կարգ պատմութեանն, զոր ընկալաք գրոով 'ի նախասացեալ սրբոյ ուխտէն սպասաւորաց, որ է այսպէս։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳՍԻ

ՁՕՐԱՎԱՐԻ

ԵՒ ՈՐԴԻՈՅ ՆՈՐԱ

ՈՐՈՅ ԱՆՈՒՆ ԿՈՉԻ

ՄԱՐՏԻՐՈՍ

Ի ԺԱՄԱՆԱԿՍ Թագաւորութեանն Հռոմայեցւոց մեծին Կոստանդիանոսի՝ որ ըստ բնաւորական բարեսէր կամացն, և ըստ երկնային կոչմանն 'ի վերուստ, այն ինչ նորընծայ ընկալաւ 'ի Թագաւորս ըզբարեպաշտութիւն հաւատոյ, և զկրօնս քրիստոնէութեանն, որով մեհեանք դիւաձոյլ պատկերաց տապալեալ քակէին, և եկեղեցիք Քրիստոսի պայծառացեալ լուսաւորէին յամենայն տեղիս. և խաւար

հեթանոսական կռամոլութեան հալածական լինէր, և մանկունք նոր Սիոնի փառազարդեալ շքեղանային 'ի հանդերձս ոսկեհուռն պատկեալ և պաճուճեալ. յայնմ ժամանակի ծագէր իբրեւ զաստղ լուսապայծառ յաշխարհին Կապպադովկեցւոց բարեպաշտութեան հաւատով այր ոմն զարմանալի և հռչակաւոր, որոյ Սարգիս անուն ճանաչիւր. որ արքունական հրամանաւ էր կարգեալ 'ի զինուորութիւն ընդ զօրս Թագաւորին ողբ 'ի Կապպադովկիա, գերադոյն գոլով քան զյոգունս 'ի համադասից զինուորակցացն յարիական մրցմունս 2 որ 'ի պատերազմունս բարբարոսաց. մինչ զի և համբաւ քաջութեան նորա, որով զհակառակացն մղէր մարտակառուութիւն 3, հասանէր միշտ 'ի լսելիս մեծի Թագաւորին. ուստի և ընդ պարգեւաց մեծագունից և պատիւ ստրատելատութեան առաքէր նմա, և պատուական 'ի մէջ համապատիւ իշխանացն և դատաւորաց կողմանցն

այնոցիկ լինել հրամայէր. և եղեալ նորա այնքան մեծ ապատիւ՝ մինչեւ անալ նմա բոլորիցն պատուասիրաբար, և հպատակել ամենայն խոնարհութեամբ. և ոչ ոք ընդդիմակաց գտանէր առ 'ի նմանէ եղելոցն և հրամայելոցն։

Իսկ աքանչելի այրն Աստուծոյ ելբրեւ ընկալաւ յարքունական հրամանացն զգերապատիւն այն իշխանութիւն, ոչ 'ի նիւթական շահավաճառութիւնս 'ի կիր արկանէր զայն և 'ի փառս, այլ 'ի հոգեւորս և յաստուածայինս։ Քանզի շրջէր ընդ քաղաքս և ընդ գաւառս այնր նահանգաց, և արբէր զաշխարհն 'ի կռոցն մոլորութենէ, խափանելով զզոհս ճենճերալիր ուրուական պատկերացն անտեաց. զի գեռ եւս զօրանայր առ բազումս խաբէութիւն կռապաշտութեանն. ըստ որում զոմանս բանիւ վարդապետութեան ձգէր յուսկանս առաքելականս աւետարանին Քրիստոսի Հոգւոյն իմաստութեամբ. նա և հմուտ գոլով 'ի մանկութենէ

հին և նոր կտակարանաց 4, և զոմանս սպառնալեօք հաւանեցուցանէր թողուլ զմոլորութիւն և դալառ Ճշմարտութիւնն. և զայլս՝ որոց սիրելի էր խաւարն անգիտութեան, և ատելի լոյսն աստուածդիտութեան, հալածականս դանիւք և տանջանօք առնէր 'ի հայրենի գաւառաց. և զբազինս կռոցն քակէր 'ի հիմանց, և փոխանակ շինէր եկեղեցիս Աստուծոյ, և մատրուանս նախ եղելոց վկայիցն. որովք լինէր խնդութիւն աստուածապաշտից, և սուգ որոմութեան հակառակորդացն դասուց: Եւ ինքն առ ինքեան երանելին ուրախ լինէր ընդ փառաւորութիւնն Քրիստոսի նովաւ, և ընդ կործանումն սատանայի. և այսպիսի բարեմնունդ քաղաքավարութեամբ ըստ պատուիրանացն Աստուծոյ կալով սրբոյն ամս բազումս սրբութեամբ և արդարութեամբ և բաւանդակ առաքինութեանցն մասամբք:

Բարիատեաց և մարդախոշոշ բանսարկուն նախանձաբեկ լինէր 'ի

տեսանել յայնպիսի հանդէս բարե-
պաշտութեան զերանելին, և ջա-
նայր խափանել զնա յառաջի եդեալ
Ճանապարհաց վերնոյ քաղաքին Ե-
րուսաղէմի 'ի ձեռն զանազան փոր-
ձութեանց. սակայն ոչ զօրէր որքան
սիւնքն հաստատոյ կայսրն Կոստան-
դիանոս հանդերձ որդւովքն կեն-
դանի էին յաշխարհի. զի ամրաձա-
ծուկ աջովն Աստուծոյ պարսպեալ
լինէր, և բարձրանայր օր ըստ օրէ ար-
քունական մեծամեծ ձրիւք պայծա-
ռացեալ փառաց 'ի փառս: Մինչեւ
ըստ յաճախելոյ մեղաց մերոց, յետ
երկնային խաղաղութեանն եկեղե-
ցւոյ որ յաւուրց անտի Կոստանդեայ
մեծի և որդւոցն, նստէր յանցաւորն
Յուլիանոս կոչեցեալն Պառաւա-
տոս 5 յամենայն թագաւորութեանն նո-
ցա. որ իբրեւ զկայծակն ինչ պարա-
ծածկեալ ընդ յարդիւ թաքուցեալ
ունէր զկռոցն մոլորութիւն, և 'ի դի-
պող ժամու իւրոյ չարութեանն զկնի
բարեպաշտ թագաւորացն վախճա-
նի՝ վառեալ հրդեհեաց զորս ընդ
տիեզերս զաստուածեղէն կրօնիցն

պաշտօնեայս . և մնացեալքն 'ի հե-
թանոսաց մոլորելոցն 'ի կուռս տե-
ղի գտեալ յառնէին 'ի վերայ հաւա-
տացելոցն 'ի Քրիստոս . աւերէին
զեկեղեցիս և հալածէին զպաշտօ-
նեայս . և շինէին զարձեալ հրամա-
նաւ ուրացողին զաւերեալ մեհեանս
դիցն . և զբազումս 'ի քրիստոնէից
յեկեղեցականաց և 'ի զինուորաց
և 'ի ռամկաց պէսպէս չարչարանօք
տանջեալ սպանանէին յաղագս Ճըշ-
մարտութեան հաւատոցն . և ոմանք
խոյս տուեալ փախչէին յահէ անօ-
րինացն , տարաշխարհիկ 'ի հայրենի
գաւառացն լինելով :

Իսկ երանելին Սարգիս նբրեւ
զայս ամենայն տեսանէր եղեալ ,
մտախոհ լինէր առ ինքեան եթէ
զի՞նչ կամք են Աստուծոյ՝ արասցէ ,
հայցէր պաղատանօք . և ահա երե-
եալ նմա Յիսուս 'ի տեսլեանն ա-
սէր . ժամ է քեզ , ով Սարգիս , ե-
լանել յաշխարհէ քումմէ և յազգէ
ըստ նահապետին Աբրահամու , և
գնալ յաշխարհ զոր ցուցից քեզ .
յորում պատրաստեալ է քեզ ան-

դանոր առնուլ զպատկն արդարու-
թեան ։

Յայնմ ժամանակի համբաւ ինն
հռչակեալ լինէր , եթէ հանդէր-
ձեալ է Յուլիանոս արքայ Էլանել
յարեւելս , և ընթանալ պատերազ-
մական օրինաք 'ի Պարս . քանզի կա-
խարդասար աղանդիցն հեթանոսաց
պատրեալ՝ որք զՃակատագիրն ա-
սէին , ունելնմա զԱղեքսանդրի մա-
կեդոնացւոյ , տիրել հանգոյն նմին
հանուրց թագաւորութեանց աշ-
խարհի ։

Իսկ Իբրեւ լուաւ բարեյաղթ զօ-
բավարն Սարգիս զյարուցմունս հե-
ղեղացն բռնութեան որ հանդէր-
ձեալ էր հարկանել զնմատաու-
թեան տուն զեկեղեցի , զոր 'ի վե-
րայ վնմի հաւատոյ շինեալ , կամ-
ցաւ գործով զհրամանն տէրունա-
կան կատարել . քանզի ծանեաւ
թէ այս է ժամանակն որ ցուցաւ
նմա 'ի տեսլեանն՝ հալածիլ վասն
արդարութեան , որով և Էրանելի
լինել ։ Թողոյր ապա զհայրենին
ժառանգութիւն , զնշխանական ՃՈ-

2003
Հ-4-5-4-01

խութիւնն, զերեւելի զփառան, և զյոգնախուռմբ զօրացն զպետութիւն, զառ 'ի մեծամեծացն համագասութիւն, զսննդակցացն զընդաբոյս սիրոյ զուարճութիւն. և բովանդակ իսկ ասել, զպատճառս կելոյ բարիոք նիւթականիս այս մարմնոյ, և ըստ սիրելական 6 հրամանին որ առ մեծատունն, վաճառեալ զստացելոց գոյից բազմութիւն՝ բաշխէր կարօտելոց, և թեթեւանայր ինքն 'ի հոգոց յոքնալվրդով հիւթից ծանրութենէ. և փոխանակ ծանուցն և վայրաբերաց՝ զնաչն Քրիստոսի բարձեալ, հետեւիւր նախընթաց կարապետի այնր Ճանապարհի։

Առնոյր Ճանապարհակից զՄարտիրոս անուն որդի իւր, որ ոչ էր նուազ բարի արդասեաց մարմնոյն արութեամբ և հոգւոյն առաքինութեամբ յաշնուականութենէ հայրենի բարետոհմութեանց. և նախ աղօթիւք առ Ճանապարհն ճշմարտութեան պաղատէին, և զայս յաղօթելն իւրեանց ասէին. Աստուած

բոլորից և տէր ամենայնի, յորմէ գոյացան արարածք, և նախանա-մին զօրութեամբ քով. որ քաղցր ես առ ամենեսեան, և գթած առ երկիւղածս 'ի քէն, որ եղեր ողորմութեամբ քոյով ընդ արդարան առաջինս, և փրկեցեր յիւրաքանչիւր փորձութեանց զնոսա, դու նոյն տէր 'ի սկզբանէ մինչեւ ցայժմ և յամենայն յաւիտեանս: Վասն որոյ անկեալ առաջի քո հալածեալքս վասն անուանդ քում սրբոյ, հայցեմք 'ի քէն լեր կցորդ Ճանապարհիս մերոյ յոր հանդերձեալ եմք ընթանալ, որպէս որոց նախ քան զմեզ սրբոց քոց, մինչեւ հասուցես 'ի մի յօթեւանացդ արդարոց. մոյծ զմեզ 'ի տուն հօր քո երկնաւորի. և քեզ փառք ընդ հօր և հոգւոյդ սրբոյ յաւիտեանս. ամէն:

Ապա այնուհետեւ յուզի անկեալ գնային տարագէմ յաշխարհն Հայաստանեայց, առ որ յայնժամ ունէր զաթոռ թագաւորութեան Հայոց մեծաց Տիրան անուն, որդի Խոսրովու, որդւոյ Տրդատայ մեծի

և առաքինեաց. և նորա ընկալեալ զնոսա պատուասիրելով պահէ առ
ինքեան ժամանակս ինչ։

Իսկ ամպարիշան Յուլիանոս յոք-
նախուռն ամբոխիւ յուսով և հաւ-
մայեցեալով և բարբարոսաք եղեալ
յարեւելս գայր յԱնտիոք Ասորւոց.
և զորս գտանէր առ Ճանապարհաւն
արս կամ կանայս հաւատացեալս 'ի
Քրիստոս, ընդ զանազան չարչարա-
նաք արկեալ վախճանէր 'ի կենաց։
Եւ այս համբաւ դառնութեան ե-
հաս ընդ բնաւս. յորմէ սասանումն
երկեւղի պաշարէր զամենեսեան. և
փախստեայ եղեալ յոլովից թաք-
չէին 'ի խորաձորս և 'ի ծերպս վի-
մաց։ Լինէր լսել այս և յաշխարհն
Հայոց, որովք ոչ սակաւ ինչ խառ-
վէին յերկեւղէ ամպարշային. և
այնքան մինչեւ զանգիտեալ ազգային
Հայոց զերջանիկն այն ունել առ
ինքեան, գուցէ, ասէ, ծանուցեալ
խնդրեսցէ, և յոչ տալն խառվուա-
թիւն լինել նմա ընդ աշխարհս եւս.
խորհրդակից լինի ապա նմին խոյս
տալ անդուստ և առ Պարսիցն ընթա-

նալ Թագաւորն Ղապուհ անուն։ Եւ այս գործիւը ոչ վայրապար, այլ զի ձգէր զնա տնօրէնութիւնն Աստուծոյ տեսլեամբ 'ի նշանակեալն տեղի, յորում հանդերձեալ էր պսակիլ վկայութեամբ 'ի Քրիստոս։

Եւ եղեալ վկայութեամբ յաշխարհէն Հայոց հանդերձ որդւովքն իւրով, և հասեալ 'ի Պարսս յանդիման լինէր Թագաւորին. զոր տեսեալ Ղապհոյ ուրախ եղեւ յոյժ, մանաւանդ իբրեւ լուաւ զհամբաւ քաջութեան նորա, և զհատուածի պատճառաւ եկանելն 'ի Հոռոմոց. և ընկալեալ մեծապատիւ փառօք, ընդ առաջին զօրագլխացն Պարսից կարգէր զնա, գունդս բազումս տուեալ 'ի ձեռս նորա, և յամենայն պատերազմունս առ որս առաքեալ լինէր յաջողէր նմա Աստուած. որով լինէր սիրեցեալ յաջս Թագաւորին և մեծամեծաց նորա։ Իսկ երանելին ոչ անձին զօրութեան այլ Աստուծոյ տալով զյաղթութեան կատարումն. վասն որոյ ոչ երբեք նուազեցուցա-

նէր զհոգեւորացն ընծայաբերու-
թիւն . այլ յարաժամ մատուցա-
նէր զգոհութեան և զփառաբանու-
թեան պատարագս առաջի Աստու-
ծոյ, ոչ միայն զանձին իւրոյ մաքրու-
թիւն բանաւոր պատարագաց , այլ
և զանբանից կենդանեաց զենմունս
բաշխելով 'ի պէտս աղքատաց և կա-
րօտելոց , ըստ սովորութեան իւ-
րում 'ի նախնեաց անտի . զոյն և
ուսուցանէր ամենեցուն աննուազ
կատարել զզենմունս անասնոց 'ի
նուէրս Աստուծոյ , յաղագս կե-
րակրելոյ ողորմութեամբ զքաղ-
ցեալս և զկարօտեալս ։

Յայնմ ժամանակի լուր եհաս ե-
թէ զօրքն Հռովմոց որ ընդ Յու-
լիանոսիւ , աւերեն սասպատակաւ
զաշխարհն Տաճկաց որ ընդ սահ-
մանաւ Թագաւորութեանն Շապ-
պոյ . և հաճոյ թուեցաւ արքային
առաքել զսուրբն Սարգիս 'ի պահ-
պանութիւն կողմանցն Տաճկաստա-
նի , որ էր սահմանակից աշխարհին
Հռովմոց . և արքայն առեալ ըզ-
գունդս զօրաց իւրոց հասանէր 'ի

տեղին նախասացեալ, և անդանօր դադարեալ ամիսս երիս, բանակէր ընդդէմ զօրացն Յուլիանոսի, պահելով 'ի թշնամեացն սասպատակէ զաշխարհն զայն. և զայն լուեալ հռովմայեցւոցն, բազմութիւն զօրացս եկեալ զետեղէին հանդէպ սոցա, և խնդրէին օրինաք պատերազմել ընդ միմեանս։ Իսկ զօրքն որ ընդ սրբոյն Սարգսի տեսանելով զայնքան ամբոխ բազմութեան զօրու ծանու և զինու, զանգիտէին յոյժ և ասէին կորնչել 8 'ի ձեռաց նոցա, յաղագս անկարելի գոլ պատերազմել ընդ այնքան ուժոյ բըռնութեամբ։ Իսկ երանելւոյն տեսանելով այնքան զանգիտեալս յերկեւղէ նոցա զիւր զօրսն, տեղի եդիս յայանի առնել նոցա զիւրոյ զհաւատոյն զՃշմարտութիւն, և ըզհեթանոսականացն աղարտութիւն 9, ասէր. Եղբարք իմ և զինուորք, եթէ հաւատայք բոլորով սրտիւ յարարիչն երկնի և երկրի, ոչ երբէք զարհուրեսցին սիրտք ձեր 'ի բազմութենէ անտի զօրացն թըշ-

նամեաց մերոց . այլ անյաղթելի զօրութեամբ ճշմարտին Աստուծոյ իմոյ , մին 'ի ձէնջ զհազարսն հալածեացէ 'ի նոցանէ և երկուքն ըղբեբրան շարժեացեն : Իսկ անուանեալ աստուածքն ձեր ոչինչ ունին զօրութիւն , և ոչ լուսաւորքդ զոր պաշտէք , և ոչ տարերացդ բնութիւնք , և ոչ պատկերք կռոցն որոց երկրպագէք . քանզի աչք են նոցա և ոչ տեսանեն . ականջք են և ոչ լսեն , ձեռք և ոչ շօշափեն , ոտք և ոչ գնան , և ոչ բարբառին կոկորդք նոցա և բերանք իւրեանց : Եւ նոքա ասեն . Իսկ արդ ո՞ւր է Աստուածն քո Սարգիս , եթէ նոքա չեն աստուածք , ցոյց մեզ զի տեսեալ հաւատացուք 'ի նա : Եւ ասէ երանելին . Իմ Աստուածն ամենայն եղելոց է Աստուած , երեւելեաց և աներեւութից . Հայր անսկիզբն և անեղ արարիչ եղելոց ամենայնի . Որդի ծնեալ 'ի Հօրէ անմարմնապէս յառաջ քան զյաւիտեանս , էակից Հօր և արարչակից . Հոգին սուրբ բղխումն 'ի Հօ-

րէ 10 անժամանակ և անքննաբար, փառակից Հօր և Որդւոյ. երեք անձինք կատարեալք, մի բնութիւն և մի աստուածութիւն անբաժանելի. որով'ի լինելութիւն եկին արարածք ամենայն, երկնայինք և երկրաւորքս, բանական կենդանիք. և որպէս զնմանալի աշխարհն վերին անմարմին բանականացն ետ 'ի բնակութիւն, նոյնպէս և զդալի աշխարհս մարմնաւոր բանականաց 11 մարդկան: Զոր ստեղծեալ զմարդն առաջին, և ըզկինն 'ի հողոյ և յանմարմին բնութենէ հոգւոյ 'ի պատկեր աստուածութեան իւրոյ, եդ զնոսա յանմահական 'ի դրախտին փափկութեան, 'ի միոյ միայն ծառոյ հրամայելով ջուսել. որք ոչ պահելով զպատուիրանս նորա կորուսին զանձառելի զփառան. և փոխանակ անմահութեանն զմահ ժառանգեցին, և ընդ օրհնութեանն զանէծս, և ընդ դրախտին զփշաբերս երկիր. և փոխանակ անախտաբար աճմանն զոր հանդերձեալ էին ունել 'ի դրախտին, անասնեղէն ծննդեամբ 12

հրաման ընկալան բազմանալ 'ի վե-
րայ երկրի. որոց աճեալ 'ի բազմու-
թեան ոչ կացին 'ի պատուիրանս
արարչին, առաջին յանցանօքն շա-
տացեալք. այլ այնքան յաճախեցին
'ի մեղս՝ մինչեւ բարկանալ Աստու-
ծոյ 'ի վերայ նոցա, և խրատել ջրով
և հրով, և զանազան հարուածովք.
և ոչ միայն ոչ դարձան 'ի բարիս,
այլ եւս դրդեցան 'ի չարիս, զի փո-
խանակ արարչին արարածոցս եր-
կիր պագանէին: Բայց և այնու ա-
մենայնիւ ոչ անտես արար զմարդ-
կային բնութիւնս, այլ յայտնեաց
զինքն արդարոց յիւրաքանչեւր ժա-
մանակս, խօսելով ընդ Աբրահամու
և զաւակի նորա. որոց և եւ օրէնս
գրեալ մատամբ իւրով 'ի տախտակս
քարեղէնս 'ի ձեռն Մովսէսի առա-
ջին մարգարէին. երեւեցոյց յետ
նորա և դասս մարգարէից որք խրա-
տէին յիւրաքանչեւր ժամանակս
զմարդիկ. և մարգարէանային վասն
գալստեան Որդւոյն Աստուծոյ: Որ
առաքեալ 'ի Հօրէ 'ի փրկութիւն
ազգի մարդկան, 'ի ժամանակս վեր-

ջինս էառ զմերս բնութիւն 'ի սրբոյ կուսէն Մարիամայ, և ծնեալ 'ի նմանէ անախտաբար, շրջեցաւ ընդ մարդկան ամս երեսուն, և եկն 'ի Յորդանան առ Յովհաննէս մկրտիչ առնուլ մկրտութիւն, զի զմեզս Ա. գամայ լուսացէ ջրովն Յորդանանու. վկայեցաւ յերկնից 'ի Հօրէ եթէ Դա է որդի իմ սիրելի, և 'ի սուրբ Հոգւոյն աղաւնակերպ ելմամբ. յայտնեաց ինքն զաստուածութիւն իւր 'ի ձեռն պէսպէս սքանչելեացն զոր կատարեաց, ըզհիւանդս բժշկելով, զկոյրս լուսաւորելով, զմեռեալս յարուցանելով, 'ի վերայ ծովուն գնալով, սակաւ հացիւ զբազս կերակրելով. և զայլս բազմապատիկս, զորս տակաւրանայ լեզու առ 'ի պատմել:

Իսկ ազգն հրէական զայսքան բարութիւն գտեալ առ 'ի նմանէ, ապերախտ առ բարեգործն եղեն. և մատնեալ զնա խաչի և մահու. որ և ինքն կամաւ ետ զանձն և ոչ 'ի հարկէ. զի կատարեսցէ զմարգարէից կանխատացութիւն և զաշխարհի

փրկութիւն. և յայտնի արար 'ի մեռանելն մարմնով զզօրութիւն աստուածութեան իւրոյ. զի արեգական խաւարեցաւ, երկիր շարժեցաւ, վէմք պատառեցան, վարագոյր տաճարի նոցա հերձաւ, գերեզմանք բացան և մեռեալք յարեան. էջ 'ի գերեզման մարմնով որպէս մարդ, և յարեաւ ինքնիշխանաբար յաւուր երրորդի որպէս զԱստուած. երեւեցաւ աշակերտաց իւրոց յետ յարութեանն և խօսեցաւ ընդ նոսա զաւուրս քառասուն, և համբարձեալ յերկինս նստաւ ընդ աջմէ Հօր իւրոյ. և գալոց է նովին մարմնով դատել զաշխարհս ամենայն ըստ իւրաքանչիւր գործոց. բարեգործացն և ուղիղ հաւատացելոց յԱստուած՝ զբարիս հատուցանելով, իսկ չարագործացն և անհաւատից զտանջանսն յաւիտենական: Արդ այս է Ճշմարիտ աստուածպաշտութիւն, որում թէ հաւատայք բոլորով սրտիւ ձերով, և 'ի բաց կայք 'ի խաւարային պաշտամանց ձերոց, ընդունիցիք

զյաւիտենից կենդանութիւնն, յորժամ գայ Քրիստոս փառաւք աստուածութեան իւրոյ, և ոչ տանջեցիք ընդ անհաւատան 'ի հուրն անվախճան։

Զայս և առաւել քան զսոյն խօսէր երանելին Սարգիս առաջի բազմութեան զօրացն. և բազումք 'ի նոցանէ հաւատացին 'ի տէր. և մկրտեցան 'ի քահանայից անսի՝ որք ընդ սրբոյն։

Իսկ զօրացն Հոռովմոց գունդ բազում հատեալ արշաւել կամելով 'ի կողմանս Տաճկաստանի որք ընդ պահպանութեամբ սրբոյն Սարգսի, և խաւարային օդովք պաշարեալք որպէս Ասորեստանեայն առ Եղիսէիւ, մոլորէին 'ի ճանապարհէ անտի աշխարհին յոր հանդերձեալ էին մտանել, և ցրուեալքն ոչ տեսանէին զմիմեանս. բազումք 'ի նոցանէ և տեսիլս ինն պատմէին անմարմնական զօրաց, և ձայն լսելի եղեալ 'ի նոցանէ, եթէ Մի յանդգնիք պատերազմել ընդ ծառային Աստուծոյ սրբոյն Սարգսի,

եթէ ոչ ամենեքեան կորնչիք։ Զոր տեսեալ սրբոյն փառս վերառաքէր ամենազօրին Աստուծոյ, և ասէր. Մեծ է տէր մեր և մեծ է զօրութիւն նորա. և ոչ պատմեացէ զքանչելիս նորա. Եկայք եղբարք իմ պատուականք, մատուցուք փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ յայտնեաց զողորմութիւն իւր առ ծառայս իւր և զզօրութիւնն առ հակառակորդսն մեր։ Իսկ զօրքն ամենայն հաստատեալք 'ի հաւատս, աղաղակէին և ասէին. Մեծ է Աստուածն քրիստոնէից և անհաս է զօրութիւն նորա. հաւատամք այսուհետեւ յամենասուրբ Երրորդութիւնն և 'ի մի աստուածութիւնն զոր քարոզեաց մեզ Սարգիս։ Եւ մատուցանէին ամենեքեան երկրպագութիւն առաջի Աստուծոյ, և ընծայէին նուէրս բազումս զենմամբ անանց կենդանեաց, և ուրախ լինէին միշտ 'ի վարդապետութիւն սրբոյն։

Իսկ բարիատեացն սատանայ բանսարկուն դրդեաց զոմանս 'ի զո-

լաց անսէ , յորոց ոչ ծագեաց յո-
գիս լուսաւորութիւն աւետարանին
Քրիստոսի . և գնացեալ առ Թագա-
ւորն Շապուհ , Ապատամբեաց , ա-
սեն , Սարգիս յաստուածոց և 'ի
ձէնջ ալքայ , և քարոզէ հաւատալ
'ի Յիսուս Նազովրացի , և զզօրսն ա-
մենայն ապստամբեցոյց զկնի մոլո-
րութեանն իւրոյ . միաբանեալ է
սիրով և ընդ զօրացն Հռոմոյ :

Զայս ամենայն լուեալ Թագա-
ւորին , և 'ի մեծի եղեալ արտմու-
թեան և խռովութեան , խորհէր
ընդ աւագանւոյն թէ զինչ արաս-
ցէ . և առեալ զխորհուրդս՝ առաքէ
նմա պարգեւս մեծամեծս , գրեալ
առ նա նամակ որ ունէր օրինակ
զայս . Ողջոյն բարի համբաւ զքէն ,
պատուականդ 'ի զօրագլուխս մեր
Սարգիս , յաղագս մտերիմ լինելոյ
Թագաւորութեանս մերոյ , և ու-
րախ եղաք յոյժ . վասն որոյ սէր մեր
յաճախեաց 'ի վերայ քո որպէս առ
հաւատարիմ ծառայ և իմաստուն .
ըստ որում առաքեաց քեզ Թագա-
ւորութիւնս մեր ձիր արժանաւոր
մեծանձնութեան քո . Ողջ լեր :

Եւ յետ այսորիկ մեւսանգամ խորհրդածեալ արքայն ընդ խորհրդակիցս իւր, առաքէ զորդի Երանելւոյն՝ որ էր 'ի գրան արքունի՝ հրաւիրակ նմին, իբրու զի առանց կարծեաց ինչ եկեսցէ վաղագոյն, գրելով օրինակ զայս. Եհաս առ մեզ, ո՛վ վեհագոյնդ զօրագլխաց մերոց, Սարգիս, կորովամիտ քո իմաստութեան համբաւ. զի ըստ օրինակի խոհական 13 իմաստասիրաց շահեցայք զնաղաղութիւն աշխարհիդ նուաճելով զթշնամին. արդ վասն զի զայդ բարւոք անօրինեցէք, հրամայեսցէ այսուհետեւ թագաւորութիւն մեր կանխաւ ժամանել առ մեզ ընդ որդւոյ քում. քանզի կարօտիմք զկատարեալ քո խոհեմութիւն խորհրդակից առնլոյ յաղագս թագաւորութեանն հռովմայեցւոց, հուպ հանդերձեալ տալոյ ընդ մեզ պատերազմ. Ողջ լեր։

Եւ յուզն անկեալ որդւոյ նորա մերձ գայր 'ի սահմանն յորում էր բանակեալ հօր նորա 14. և 'ի ճանապարհի անդ պատահեալ թշնա-

մեացն դասուց, ըմբռնեցին զպա-
տանին և զորս ընդ նմա, և տարան
'ի բանակն իւրեանց. և ազգ եղեալ
սրբոյն ներգործութիւն իրացն որ
յազգմանէ չարին, տրամութիւն ոչ
սակաւ տիրեաց նմա և ամենայն զո-
ւրացն: Ապա զմարդկային օգնակա-
նութեան յուսոյ անփոյթ արա-
րեալ, յԱստուած ապաւինէր. ո-
րում և պաղատանս արտասուալից
առաջի անկեալ մատուցանէր. յի-
շելով յաղօթելն զաքանչելեացն ըղ-
կատարումն յիւրաքանչեւր դարս
առ Նոյ և Աբրահամ, Իսահակ և
Յակովբ և ամենայն նահապետան,
եթէ Որպէս լուար աղօթից նոցա,
լուր և ինձ մեղաւորիս. և ըստ ո-
րում Յակովբայ արդարոյ շնորհե-
ցեր զՅովսէփ 'ի տեսանել, տուր և
ինձ զորդի իմ վերատին տեսանել.
զի մի գայթակղեալ կորիցեն նոր
հաւատացեալ ժողովուրդս ոչք
դարձան առ քեզ քարոզութեամբ
ծառայի քո, այլ արա տեսանել
սոցա զողորմութիւն քո առ իս 'ի
փառս անուանդ քո սրբոյ: Եւ զե-

ին աւուրս ոչ դադարէր յաղօթե-
լոյ զցայգ և զցերեկ. և ահա յա-
ւուրն երրորդի առեալ զորդի նո-
րա որք ըմբռնեցին և զորս ընդ
նմա՝ ածին առաջի երանելւոյն
պատմելով զեղեալ սքանչելիսն ի մին
առնոսա, եթէ յորմէ հետէ մուծաք
զսա 'ի բանակ անդր, ոչ դադա-
րեաց խռովութիւն 'ի զօրացն, մին-
չեւ զվիմեանս սատակել բազմաց.
և տեսիլ երեւեալ զօրագլխացն, Ե-
թէ ոչ դարձուցանէք զպատա-
նեակդ առ հայր իւր, ամենեքեան,
ասէ, սատակիցիք։ Զոր տեսեալ
երանելւոյն և լուեալ, լի եղեւ խըն-
դութեամբ, և անկեալ 'ի վերայ ե-
րեսաց իւրոց գոհանայր զԱստու-
ծոյ, և ասն ուրախութեան կատա-
րէին զօրն զայն՝ զենմամբ խոյոց և
զուարակաց 'ի նուէրս անուան
Բարձրելոյն, զորս բաշխելով կա-
ղօտելոց. ուրախ լինէին 'ի տէր հո-
գեւոր և մարմնաւոր խնդութեամբ։

Յետ այսորիկ իբրեւ լուաւ սուրբն
Սարգիս յորդւոյ իւրմէ զհրա-
մանս թագաւորին, զի կոչէր զնա

ստիպով. ծանեաւ հոգւոյն զչա-
բութիւն ամպարշտին. և կոչեցեալ
առ ինքն զզօրսն ամենայն ոլոր հա-
ւատով զօրացեալ հաւատացեալ
էին 'ի Քրիստոս, ասէ ցնոսա. Եղ-
բարք, ահա ժամանակ ընդունելի,
յորում պարտ է զբարեպաշտու-
թիւն հաւատոց մերոց յայտնի առ-
նել. և խոստովանել զտէր մեր
Յիսուս Քրիստոս առաջի մարդ-
կան, զի և նա խոստովանեսցի զմեզ
առաջի Հօր իւրոյ և հրեշտակաց
սրբոց: Իսկ զօրացն իբրեւ ընդ մի
բերան պատասխանի տուեալ նմա
ասեն. Ընդ քեզ եմք, ո՛վ հայր
պատուական, 'ի կեալ և 'ի մեռա-
նեալ: Եւ սուրբն ասէ. Հրամայեալ
է մեզ 'ի տեառնէ ոչ ծածկել զլոյս
հաւատոց մերոց, այլ դնել 'ի վե-
րայ աշտանակի, և քարոզել 'ի վե-
րայ տանեաց. և մի՛ երկնչել յայն-
ցանէ որ զմարմին ապականեն և զո-
գին ոչ: Բայց ես անպիտանս յա-
մենայնի ստացական ստունգանող
գտայ հրամանաց տեառն իմոյ. քան-
զի ծածկեցի յիս ինքեան իբրեւ

զՀրապ ընդ գրուանաւ զլուսաւո-
րութիւն հաւատոյն որ առնա՝ յա-
ղագս երկեւղի մարդկան։ Այլ
այժմ, եղբարք, աղաչեցէք զտէր,
զի տացէ ինձ համարձակութիւն
աներկեւղ քարոզեալ զանուն նո-
րա առաջի թագաւորաց և իշխա-
նաց. և հաստատեցէք զոտս իմ 'ի
վերայ վիմին հաւատոյ, զի մի սա-
սանեցայց 'ի մարդկանէ, որոց հան-
դերձեալ եմ կալ առաջի. քանզի
այնր աղագաւ է կոչումն այս։ Եւ
զօրականացն պատասխանի տուեալ
ասեն ցսուրբն. Աղաչեմք և խոր-
հրդակից լինիմք տեառնդ մերոյ՝
ոչ տեսանել զերեսս բռնաւորին,
և մի ինչ զանգիտեր. քանզի յամե-
նայն պատերազմունս որ պատահեն
առաջի քո մեռանիմք ամենեքեան
մեք. նա թէ մարտիցէ ընդ մեզ,
յաղթեմք նմա զօրութեամբ տեառն
մերոյ յոր հաւատացաքս։ Պատաս-
խանի ետ սուրբն և ասէ ցնոսա. Ոչ
հրամայէ տէր մեր ըստ մարմնոյ զօ-
րանալ, այլ հոգւով. և ոչ պատե-
րազմական մենքենայիւք, այլ համ-

բերութեամբ մեր 'ի նեղութիւնս յաղթել թշնամեաց մերոց։ Արդ մի խափանէք զիս յառաջակայ ընթացից կենաց Ճանապարհին, այլ աղաչեցէք զտէր զի արժանի արասցէ զիս մեռանել վասն անուան իւրոյ սրբոյ. և ձեզ հովանի լիցի աջ նորա, և հաստատեսցէ 'ի հաւատս Ճշմարիտս զոր ընկալայք 'ի շնորհաց սուրբ Հոգւոյն. և եթէ սիրէք զնա բոլորով սրտիւ ձերով, նոյն ինքն եղիցի ձեզ փրկութիւն 'ի կեանս յայս, և յաւիտենական կենացն արժանի արասցէ ընդ ամենայն սուրբս։

Զայս և որ սոցին նման խօսեցաւ երանելին ընդ հաւատացեալ զօրացն, հաստատէր զնոսա 'ի հաւատս. և ապա բաժանեալք 'ի միմեանց բազում արտասուօք հանդերձ որդւոովն, և ոմանք 'ի զօրականացն յուղի անկեալ դային առթապաւորն. զոր տեսեալ ուրախ եղեւ յոյժ. և ասէ ցխորհրդակիցսն իւր. Կարծեմ անիրաւ գոլ զամբաստանութիւնն զնմանէ, և

'ի նախանձուէ շարժեալք, այլ ոչ ուղղութեամբ։ Եւ դարձեալ 'ի սուրբն Սարգիս ասէ. Բարի է գալուստ քո իմաստուն և հաւատարիմ 'ի զօրագլուխս իմ. ընկալցիս ողորմութիւն առ 'ի մէնջ ըստ անստեղծեալ հաւատոց որ ցուցեր մեզ։ Վասն որոյ մեծացուցանէ ըզքեզ թագաւորութիւն մեր. և գլուխ ամենայն զօրաց կացուցցէ յաղագս խոհեմագոյն քո իմաստութեան։ Եւ շնորհէր նմա ձիրս բազումս և պատիւս գերապանծ Ճոխութեան և պայծառութեան։ Բայց նա ոչ 'ի բանից անտի պարտեցաւ, և ոչ 'ի Ճշմարտութենէն՝ յաղագս երեւելի մեծութեանն՝ այլապիսեցաւ. այլ տայր նմա պատասխանի իմաստախոհ բանիւք. Գոհանամ, ասէ, զԱստուծոյ իմոյ որ փրկեաց զիս 'ի ձեռաց Ճշնամեաց իմոց, ոչք ոչ իմաստութեամբ մերով և ոչ զօրութեամբ յաղթահարեցաք, այլ ամենազօրին Աստուծոյ կարողութեամբ. նոքաւ են և պարգեւքն շնորհեալք առ 'ի ձէնջ.

քանզի եւ ձեզ իմաստութիւն ճանաչել զՃշմարիտն : Եւ զայս ասացեալ սրբոյն , էլ յերեսաց նորա : Եւ ասէ Թագաւորն ցմերձակայս իւր . Կատարեալ'ի Ճշմարտութեան տեսանեմ զայրս զայս : Իսկ ջարախօսքն յառաջ մատուցեալ ասեն . Թագաւոր և արքայ քաջ , զնազովեցուցն ունի զուսուցն և զաղանդն , վասն որոյ և Աստուած ոչ զմերս այլ զնազովեցին զՅիսուս անուանէ . ապա թէ ոչ՝ հարցցէ ցնա թագաւորութիւն քո , և ծանիցէ զբանիս մերոյ զՃշմարտութիւն : Եւ իբրեւ լուաւ զայս Թագաւորն , սրբատեցաւ յոյժ , և խորհէր 'ի միտս , թէ զինչ գոցէ զասացելոցն իրաւաբանութիւն :

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ էին ոմն աստուածոցն . և էլ հրամանն յարքայէ ժողովել բազմութեանն յատրուշանս կրակարանին յորում զհուրն լուցանէին ըստ պարսկական օրինացն . յորս էին կանգնեալ և պատկերք կուռց երկոտասան : Կոչեցեալ եղեւ և Սարգիս

ընդ պատուական զօրագլխացն գալ հանդերձ որդւովն իւրով՝ի հանդէսն յայն. և երանելւոյն ծանուցեալ զհասեալ ժամն որ յաղագս Աստուծոյ պատերազմին, յարուցեալ կայր յաղօթս առ Աստուած և ասէր. Տէր Աստուած փրկիչ յուսացեալոցս՝ի քեզ՝ որ խոստացար ծառայից քոց և ասացեր, թէ Յորժամ տանիցեն զձեզ առաջի թագաւորաց, մի՛ հոգայցէք վասն տալոյ պատասխանի. զի ես տաց ձեզ բան և իմաստութիւն, որում ոչ կարիցեն ընդդիմակաց լինել հակառակորդքն ձեր. արդ տուր և ինձ, տէր, բան՝ի բանալ բերանոյ իմոյ յասպարիզիս որ առաջի կայ. և զօրացո զիս համբերել չարչարանաց և համահաւաք մահու, որ գան՝ի վերայ իմ՝ վասն անուանդ քո սրբոյ. և քեզ փառք յաւիտեանս։

Եւ իբրեւ կատարեաց զաղօթսն, գնաց հանդերձ որդւովն իւրով՝ի կոչումն արքային. և տեսեալ զնա թագաւորն, ասէ բարձր ձայնիւ. Սարգիս, պատուականդ՝ի զօրա-

գլուխս զօրաց իմոց, յառաջ մա-
տուցեալ զոհեա հրոյ ըստ օրինի ա-
մենեցուն մեր, և արկ խունկ առաջի
մեծամեծաց աստուածոցն, որպէս
արդարեւ աստուածասէր. որպէս
զի չարախօսքն քո յամօթ եղեալ,
պայծառացիս դու բարձրագոյն
փառաւք: Պատասխանի եա սուրբն
Սարգիս և ասէ. Ես ճշմարտին Ա-
ստուծոյ մատուցանեմ զոհ և երկրը-
պագութիւն, այնմ որ արար զեր-
կինս և զերկիր և որ 'ի նոսա արա-
րածք իցեն, որ է կենդանի և յա-
ւիտենական թագաւոր. որում
պարտ էիր, ո՛վ թագաւոր, եթէ
ունէիր իմաստութիւն՝ երկիրպա-
գանել և փառաւորել, և ոչ տար-
ուեղէն արարածոց գոյացելոց 'ի
նմանէ և անշունչ պատկերաց 'ի
մարդկանէ եղելոց: Զայս լուեալ
արքայն ասէ. Ահա յայտնի եղեւ
մոլորութիւն քո, ո՛վ թագաւորու-
թեան հակառակ, ո՛վ արբեալդ յի-
մարութեամբ, և զրկողանձին քում
ինքնակամ 'ի բեւրուց բարեացն
զորս հանդերձեալ էաք առնել քեզ:

Իսկ դու փոխեցեր զսէր քո առ այր ոմն հրեայ որ վասն մեղաց իւրոց խաչեցաւ. և այլ եւս բանիւք բազմօք հայհոյեր զՔրիստոս։

Իսկ երանելին Իբրեւ լուաւ զայս, ոչ կարաց համբերել, այլ լցեալ զբերան իւր խուխուլ եթուք ընդդէմ ամպարշտին. և ոյժ առեալ 'ի Հոգւոյն սրբոյ, և ձգեալ զձեռն՝ մանրեաց զպատկերս կեղծաւոր կըռոցն. և ասէ. Ո՛վ անմիտք, ահա պաշտամունք ձեր փշրեցան, և հուրդ որում երկրպագէք, մոխիր է ցնդելի։ Եւ յորժամ տեսին զայս և լուան մոգքն և բազմութիւն հեթանոսացն որ անդ կային, շարժեցան բարկութեամբ 'ի վերայ սրբոյն. և բուռն հարեալ զնմանէ, քարշէին յայսկոյս և յայնկոյս, և աղաղակէին սպանանել զնա. և 'ի յանդուգն յարձակմանէ անօրինացն, սպանաւ 'ի մէջ ամբոխին Մարտիրոս անուն որդի նորա, գործով ընկալեալ զվկայականն անուն, պատակից նախընթաց վըկայից եղեալ 'ի Քրիստոս։ Իսկ

թագաւորն արդել զբաղմութիւնն 'ի սպանանելոյ զերանելին, և հրամանն եւ կապել երկաթեաւ և դընել 'ի բանդի. և որոմեցաւ յաղագս մահուան որդւոյ նորա, զի առանց կամաց նորա եղեւ։

Իսկ երանելին 'ի բանդին գոհանայր զԱստուծոյ, զի արժանի եղեւ վասն անուան նորա կրել զչարչարանս և զկապանս. եւս և վասն որդւոյ իւրոյ՝ զի վկայական արեամբ պսակեցաւ 'ի Քրիստոս. և մինչդեռ 'ի բանդի անդ կայր յաղօթս, 'ի մէջ գիշերին երեւեալ նմա բանսարկուն սատանայ, ասէ. Ով Սարգիս, զինչ շահիս 'ի յամառ խորհրդոց. հաւանեա կամաց թագաւորին և լեր երանելի յաշխարհի, և մի վասն մեռոյ յուսոյ լքաներ ըզկեանս քո։ Ասէ ցնա սուրբն Սարգիս. Երթ յետս հակառակորդ ճըշմարտութեան և հայր ստութեան. զի իրաւ քո ոչ է պատճառ կենաց, այլ մահուն յաւիտենից ունողացն զնա, որ ընդ քեզ արկանին 'ի կորուստ, այնոքիկ ոչք առնեն զոր

ասեաց . և նոյնժամայն հալածեալ
ջարն եղեւ աներեւոյթ :

Եւ ահա յանկարծակի երե-
ւեալ նմա տէր Յիսուս 'ի բանդին
հանդերձ երկնաւոր զօրօքն , և լի
եղեւ տունն գերապայծառ լուսով
առաւել քան զարեգակն , և լու-
ծան վաղավաղակի կապանք ձեռաց
և ոտից երանելւոյն : Եւ ձայն լսելի
եղեւ 'ի լուսոյ անտի և ասէ . Քա-
ջալերեաց բարի և հաւատարիմ
ծառայ իմ Սարգիս . և մի երկիցես
'ի սիրտ քո 'ի սպանողաց զմահկա-
նացու մարմնոյդ . զի մոռանելոց ես
'ի տրտմականաց աստի և 'ի հոգա-
նիւթ յարկաց յանվախճան ուրա-
խութիւն լուսեղէն խորանաց տեառն
քո : Եւ 'ի տեսիլ լուսոյ փառաց
այնորիկ ծագման , ժողովեցան
բազմութիւնք որ շուրջ կային ըզ-
բանդիւն 'ի տուն անդր և լցեալք
զարմանալեօք , տային փառս ճըշ-
մարտին Աստուծոյ զոր քարոզէրն
Սարգիս . մանաւանդ իբրեւ տեսա-
նէին զերանելին Սարգիս զի արձա-
կեալ էր 'ի կապանաց և կայր յա-

զօթս առ Աստուած. և վաղվաղակի երթեալք պատմեցին թագաւորին զքանչելիսն զոր տեսին, և հրամայէր առաջի իւր ածել զերանելին: Եւ իբրեւ տարան, ասէ ցնա. Ով անիմաստ և թշնամի անձին քում. զինչ շահ եբեր քեզ հակառակութիւն հրամանաց մերոց, բայց թէ զանարգանս և զչարչարանս և զմահ որդւոյ քո. և թէ ոչ զղջացեալ դառնաս՝ չարաչար մահուամբ էլցես 'ի կենաց. իսկ եթէ փոխեացիս յանմիտ խորհրդոց այսր, և գաս 'ի լաւութիւնն, յիշելով զսէրն մեր զառաջին, քաղցրութիւն մեր և ներողութիւն ոչ համարին 'ի մեզ զսխալանագ որով յանցաւոր գտար. այլ եւս գերագոյն պատուոյ և փառաց արժանաւորեացիս: Արդ յայսմ աւուր միայն անսա հրամանաց մերոց, և յեա այսորիկ երթ առնազուլեցին: Զայս ասէր թագաւորն, վասն զի ոչ կամէր զմահ սրբոյն, քանզի Յուլիանոսի կայսեր հասեալ էր համբաւ գալստեան:

Երանելին ասէ. Զամօթ և զնա-

խատինս աստուածոց քոց ոչ զդա-
ցեր. քանզի խաւար և անլոյս ես
իբրեւ զաստուածն քո. զիարդ
տեսանելով մանրեալ զնոսա իբրեւ
զփոշի, և ոչ ծանեար զտկարութիւն
նոցա։ Այլ իմ պարծանք և յոյս
առ Աստուածն իմ է Յիսուս Քրիս-
տոս, զի որպէս զորդին իմ ընկալաւ
բարեպաշտութեան հաւատով, և
զիս ընկալցի 'ի նոյն հաւատս արմա-
տացեալ և հաստատեալ. զորմէ գո-
հանամ և փառաւորեմ զի ընկա-
լաւ զպտուղ որովայնի իմոյ, և ոչ
ետ խաբել մոլորութեան քո. և
արդ ասեմ յայտնապէս զի կուրու-
թիւն քո զիս ոչ խաւարեցուցէ, և
անիմաստութիւն քո զիս ոչ յիմա-
րեցուցէ։

Իբրեւ լուաւ զայս Թագաւորն
լի եղեւ սրտմտութեամբ, և հրա-
մայեաց մերկացուցանել 'ի նմանէ
զպատմուճանն զինուորական և ա-
սէ. Սարգիս՝ որ ոչ ծանեաւ զպա-
տիւն զանպատուութիւն ծանիցէ
և 'ի մեղս իւր մեռցի. և հրաման
ետ հանել արտաքոյ քաղաքին և

սպանանել։ Արդ առեալ զնա դահ-
ճացն վարէին զնա բռնութեամբ
մինչեւ 'ի մահուն տեղի. երթային
ընդ նմա բազմութիւնք յոյժ քրիս-
տոնէից և հեթանոսաց. և իբրեւ
հասին 'ի տեղին որ անուանեալ կո-
չէր Սալք, դադարեալ սրբոյն,
քանզի անդանօր հանդերձեալ էր
կատարիլ, և զձեռս տարածեալ և
կացեալ յաղօթս բարձր ձայնիւ ա-
սելով.

Տէր Աստուած յաւիտենական
որ արժանի արարեր զիս մեռանել
վասն անուանդ քո սրբոյ, լուր ա-
ղաչանաց ծառայի քո, և ընկալ զիս
ընդ այնոսիկ որ սիրեցին զօր երե-
ւելոյ գալստեան քո, և եղեն
ճանապարհակից քեզ չարչարանօք
խաչի և մահու. և զոր միանգամ
պատրանօք չարին մեղուցեալ եմ
'ի մանկութենէ իմմէ առաջի քո
մինչեւ ցայժմ կամաւ և ակամայ,
գիտութեամբ և անգիտութեամբ,
լուսա և մաքրեա ողորմութեամբ
քո 'ի ձեռն հեղման արեան իմոյ։
Ընորհեա և հաւատացելոց քոց

ամենեցուն որք յիշեն զանուն իմ 'ի բարեխօսութիւն, զթողութիւն մեղաց, և յիւրաքանչիւր վըտանգից զփրկութիւն հոգւոյ և մարմնոյ, զդիւաց հալածումն, զհիւանդաց բժշկութիւն, 'ի պատերազմունս յաղթութիւն, 'ի կապանաց և 'ի բանդից զարձակումն, 'ի ծառայութենէ զազատութիւն, 'ի խռովութեանց զխաղաղութիւն, 'ի նեղութեանց անդորրութիւն, 'ի ճանապարհի զառաջնորդական պահպանութիւն, ալէկոծելոց 'ի ծովու զհանդարտութիւն, յերաշտութենէ զհոսումն անձրեւաց քաղցրութեան՝ յառատապէս պտղաբերութիւն. 'ի կարկտաբերև յեղեամն արկու օդոց բռնութենէ դադարումն արագապէս, մարախոյ և ամենայն վնասակար զեռնոց որ շարժին 'ի բարկութենէ քումմէ պատուհասել զմարդիկ վասն մեղաց՝ զհալածումն. և որք նուիրական ընծայիւք և ողորմութեամբ զյիշատակս մեր կատարեն, ընկալ 'ի հոտ անուշից, և վարձատրեա բիւրապա-

տիկ բարութիւնս ասա և 'ի հան-
դերձելումն. և զհոգիս իմ ընկալ
յօթեվանս արդարոց 'ի հանգիստն
յաւիտենական, և քեզ փառք յա-
ւիտեանս։

Եւ յետ կատարման աղօթիցն,
էջ առ նա հրեշտակ տեառն յեր-
կնից՝ ունելով 'ի ձեռին իւրում պատակ
լուսապայծառ, և ասէ. Զօրացիր
քաջ նահատակդ Քրիստոսի, և մի
երկնչիր 'ի սպանողացդ զմարմինդ,
քանզի բացաւ քեզ դուռն արքայ-
ութեան երկնից, և զոր ինչ խըն-
դրեցեր տուաւ քեզ յԱստուծոյ.
և ամենայն հաւատացելոց խըն-
դրեցուածք յանուն քո շնորհեցի 'ի
տեառնէ։ Եւ տեսեալ բազմու-
թեանն զհրեշտակն Աստուծոյ և ըզ-
պատակն լուսոյ աղաղակէին ասելով.
Մեծ է Աստուածն քրիստոնէից,
և բայց 'ի նմանէ այլ ոչ գոյ Ա-
ստուած։ Իսկ սրբոյն դարձեալ առ
դասս հաւատացեալ զօրացն և ա-
սէ. Լուարուք ինձ այժմ հաւա-
տացեալք 'ի Քրիստոս, որք մերձ է-
ղեալ տեսանէք զնահատակութիւնս

իմ. մի՛ եղիցի ձեզ տեսանել 15 ըզ-
մահկանացու մարմնոյ իմոյ կրել
անյուսաբար զտրտմութիւն. զի ե-
թէ այսօր և եթէ վաղիւ ընդունե-
լոց է սա հարկաւորապէս զպարտիս
նախահօրն. բայց յոյս իմ որ 'ի
Քրիստոս՝ անվախճան է. որով ու-
նիմ վերստին առնուլ զսա անմահ
և անապական 'ի դալստեան նորա.
և ես ցնծամ և ուրախ եմ այսօր,
զի զփափագումն իմ որ 'ի ման-
կութենէ՝ կատարեաց Տէր, չար-
չարանաց իւրոց լինել հաղորդ, և
վկայիցն պսակաց կցորդ. և որպէս
զօրացոյց զիս 'ի պատերազմունս
մարմնաւորս թշնամեաց, զօրացու-
ցէ և այսօր 'ի վերայ ոգւոյ թշն-
նամւոյն, և որք նովաւ պատերազ-
մին: Եւ արդ իմ զընթացս բարի
ճանապարհի կենցաղոյս կատարեալ
և զհաւատն պահեալ, գնամ ու-
րախութեամբ առ Քրիստոս. և
խաղաղութիւնն Աստուծոյ եղիցի
ընդ ձեզ յաւիտեան: Եւ զայս ա-
սացեալ եդ ծունր յարեւելս, և
տեառնադրեալ զինքն նշանաւ խա-

ջին, և խոնարհեցուցեալ զպարա-
նոցն ասէ. Տէր Յիսուս ընկալ զոգի
իմ. և Եհատ դահիճն սուսերաւ
զգլուխ երանելւոյն. և նոյնժամայն
ծագեաց լոյս երկնային և շրջապա-
տէր զմարմնով նորա. և ցոլացեալ
'ի լուսոյ անտի բոց այրէր զոմանս
'ի հեթանոսաց անտի, և մնացեալքն
'ի նոցանէ փախստական լինէին:
Եւ ձայն լսելի յերկնից լինէր որ
ասէր. Վայելչապէս կատարեցեր
զՃգնուԹիւնդ քո, ո՛վ երանելի
Սարգիս. արդ եկ և ժառանգեաց
զՀանգիստն զյաւիտենական ընդ
ամենայն սուրբս: Իսկ ոչք 'ի զօրաց
անտի հաւատացեալք 'ի տեղւոջ
անդ՝ առեալ զմարմին երանելւոյն
պատեցին մաքուր զգեստիւք: Եւ
պատմեցաւ այս յականջս Թագա-
ւորին. և առաքեալ դահիճս կո-
տորեաց 'ի նոցանէ արս չորեքտա-
սան ոչք էին յազգէ անտի Պարսից,
և հրամայեաց գազանաց արկանել
զմարմինս նոցա. յորս ոչ մերձեցան
ըստ տեսչուԹեանն Աստուծոյ. ա-
պա խորհուրդ առեալ հրով այրել

զմարմին վկայեցն Քրիստոսի. վասն զի բազումք 'ի Պարսից յաղագս աքանչելեացն հաւատացին 'ի տէր։

Եւ մինչ յայսմ խորհրդեան էր Եհաս 'ի լսելիս ամպարշտին շը-շուկ երկեւղի գալստեանն Յուլիա-նոսի, և մոռանայր զչարութեան խորհուրդ որ յաղագս սրբոյն. և հանդերձեալ պատրաստէր զզօրսն ելանել ընդդէմ նորա 'ի պատե-րազմ։ Յայնժամ եկեալ ոմանք 'ի հաւատացելոցն 'ի գիշերի, և ա-ռեալ զմարմին սրբոյն Սարգսի և զորդւոյ նորա և զջորեքտասան զօ-րականացն պահեցին զգուշու-թեամբ 'ի պատուական տեղւոջ։

Կատարեցաւ սուրբն Սարգիս և ոչք ընդ նմա յամենայն յունուա-րի 'ի կատարման աւուր երեսուն և մի, 'ի թագաւորութեանն Պարսից Շապհոյ, և Հռոմայեցւոց Յու-լիանոսի։ Իսկ 'ի մեզ թագաւորե-լոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիս-տոսի. ընդ որում Հօր միանգամայն և Հոգւոյն սրբոյ փառք իշխանու-թիւն և պատիւ այժմ և յաւիտե-նից յաւիտեանս. ամէն։

Թարգմանեցաւ Ճառս յաստուծոյն 'ի մերս 'ի ձեռն Միխայելի ուրումն կրօնաւորի քահանայի ասորւոյ, և յարմարեցաւ ըստ կարի մերում լեզուի շարադրութեամբ 'ի Ներսիսէ եպիսկոպոսէ յեղբօրէ կաթողիկոսի Հայոց Դրիգորիսի, 'ի թուականութեան Հայոց ՈԷ. և մաղթեմք զընթերցողսդ և զգաղափարողսդ յիշել զաշխատեալքս 'ի սմա աղօթիւք առաջի Աստուծոյ յաւուր ծննի երանելւոյն. և զբանսդ յիշատակի գրել յիւրաքանչիւր գրեալսդ հայցեմք. ամէն։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՄԱՍԻԱ ՔԱՂԱՔԻ

ԵՒ ՅԱՂԱԳՍ

ՍՆՆԴԵԱՆ ԵՒ ՎԱՐՈՒՑ

ՍՐԲՈՅՆ ԹԷՈԴՈՐՈՍԻ

ԶՕՐԱՎԱՐԻՆ

Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ յորում մակեդոնացին Աղեքսանդր Փիլիպպեան կոչեցեալ բազմաբիւրովք 16 անաստուածութեան տիեզերակալեացն, Ամասիա 17 ոմն եղբայր Նեքտանեբեայ հօր Աղեքսանդրի հատուածեալ 18 յԵգիպտոսէ, եւ 'ի Մէջերկրեայ 'ի 19 կողմն դամբական Պոնտոսի առ երկրորդն կոչեցեալ Հայովք, առ որովք հոսի 20 Գայլն դեռ ընդ մէջ քարանձաւաց լերանց

անցանելով յանդգնագոյնս 21 , և այնպէս ելանէ 'ի Պոնտոս Պոլեմոնական ընդ Թեմիսկիւռիոն դաշտ 22 յանտառախիտ ծովեզերին որ առ գետեզերբն , ժամանէ 'ի տեղին որ կոչի Մարմառիդոն 23 , սկիզբն առեալ 'ի Պոնտոսէ 24 'ի քարալերանց : Դադարեալ ազգ 25 առնելով Աղեքսանդրի , հրաման ընդունի բնակիլ 'ի նմին տեղւոջ , զոր քաղաք շինեալ իւրովք ծառայիւք և ժողովրդովք բնակէր 26 , յիւր անուն կոչեցեալ Ամասիա :

Իսկ յետ բազում ժամանակաց Միհրդատ քեռայր Տիգրանայ Հայոց արքայի , կողմնապետ գոլով աներոյ իւրոյ 'ի Միժակ քաղաքի որ այժմ կոչի Կեսարիա , գայ ունի զԱմասիա . 'ի Հայս գրաւեալ ամենազերասահմանակալ քաղաք յարդարեաց , ընդարձակագոյնս պարիսպեաց առ կատարով լերանցն յերկոցունց կողմանց գետոյն . շինեալ և զարքունիսն ըստ հիւսիսայ 27 կողմանն գետոյն առ ստորոտով քարալեռնակին 28 . և նախ ապառա-

ժիւք մեծամեծ 29 հաստավիզ կան-
գնեալ վիմաք, և 'ի վերայ զարքու-
նիսն կանգնեալ 30 և յարեգակնայ-
ին գիմի անձաւին շիրիմն քարա-
կոփս 31 և Ճանապարհս սանդիսա-
ձեւս և տունս քարայրս գանձուց
կռածոյս 32 յօրինեալս համանման
ձեռակերտացն Ղամիրամայ որ 'ի
Վան և 'ի Խաղնաթիկեփայս 33 : Զորս
լցեալ գանձիւք տիրեաց ոչ սակաւ-
ամս 34 մինչեւ 'ի գալն Պոմպէի .
ընդ որում մարտուցեալ և պարտ-
եալ Միհրդատայ և անկեալ 'ի
Պոնտոս մեռանի 'ի Սինոպ : Իսկ
Պոմպէի առեալ զգանձն յԱմա-
սիայէ և զյոլովս 'ի բնակչաց փո-
խեալ շինէ քաղաք յիւր անուն կո-
չէլով Պոմպէոպոլիս : Բայց և զԱ-
մասիա կալեալ 'ի նախագահութեան
Եղեսպոնտոսի 35 մետրապոլիս ա-
ւարեալ, որ լի էր ամենայն չարեաք 36
և պաշտամամբք սատանայի, մինչեւ
'ի կենարար 37 քարոզութիւն ա-
ռաքելոցն յորում բաղումք հաւա-
տացին 'ի տէր :

Յորժամ եհաս սուրբ առա-

քեալն Անդրէաս յԱմասիա , և ըզ-
Փիդիմոս 38 ձեռնադրեալ եպիս-
կոպոս փոխանակ իւր Թողու ան-
դըր , և ինքն ելանէ 'ի Սինոպ ,
ուր բազում աքանչելագործու-
Թիւնք արարեալ պատմին : Եւ Փի-
դիմոս ձեռնադրէ զԵրանելին Գրի-
գոր աքանչելագործ եպիսկոպոս
Նիոկեսարիոյ . և այնպիսի ինչ կար-
գօք վարեցան երբեմն յայտնի և եր-
բեմն ծածուկ մինչեւ 'ի ժամանակս
հալածանաց , յորում բազումք վը-
կայեցին . և այլ բազմութիւն հա-
ւատացելոց սարսեալ զողեցին 39
անյայտաբար ունելով զյօժարական
հաւատն , զոր ոչ կարէին գիտել
դատաւորքն 40 . այլ և զոր գիտէին
չգիտացեալս առնէին . քանզի հրա-
ման ընկալեալ էին 'ի Թագաւորէն
մի խուզել 41 զայնոսիկ ոյք Թաքնա-
բար ունէին 42 զհաւատն , այլ
միայն զայնոսիկ խոշտանգել ոյք
քաջասիրաք համարձակութեամբ
մարտուցեալ 43 , և յայտնի արհա-
մարհեն զհրամանս Թագաւորացն և
զպաշտամունս դիցն :

Ընդ այն ժամանակս Երանելին
Թէոդորոս ծնեալ լինի 'ի քրիստո-
նեայ ծնողաց 'ի գեւղն Սաբուէ 44,
որ վեց մղոնաւ աւելի կամ պակաս
հեռի էր 'ի Վէռիս քաղաքէ էր-
կրորդ 45 Հայոց. և որպէս սահն
յաւանդական գիրս պատմութեանց
թէ մօրն վախճանեալ տղայ զնա
թողու և հայրն մնուցանէր զնա 46.
և նորա խարշեալ հատ և հատա-
ջրոմէն մնուցանէր 47 զնա. և յար-
բուն հասեալ աքանչելի վարուց
մանկութեանն՝ սուրբ և պարկեշտ
ամենայնի 48. որ զնոյն հատ սի-
րեալ ոչ ինչ աւելի քան զայն ճա-
շակէր. և այնպէս հասանէր 'ի տիս 49
հասակի երիտասարդութեան՝ կա-
տարեալ մօրուաք խորագունիւք,
կարճ հերովք գանգրիւք թուխ 50
գունով, ահաւոր տեսլեամբ, հուչա-
կեալ արութեամբ: Զոր տեսեալ 51
զարմանալի և բազում ուժով կա-
մեցան զինուորեցուցանել 'ի գուռն
արքունի. այլ նա ոչ առնոյր յանձն
ասելով. Ես երկնաւորին եմ զի-
նուորեալ տեառն իմոյ Յիսուսի

Քրիստոսի Աստուծոյն աստուծոց։ Զոր իբրեւ ընդ արհամարհի համա-
րեալ՝ի բաց թողեալ ասացին իւրովի
գալ յուղղութիւն, գիտելով զյան-
կարծակի ոգեդութեանն ընդդիմու-
թիւն՝ի հակառակութիւն բերե-
լով 52, և զհակառակութիւնն՝ի
ինքեանց։

Ընդ այն ժամանակս լինէր երա-
նելին Թէոդորոս ընդ պառատին
Եւսեբեայ ուրուն կնոջ այրոյ ան-
ցանել առ՝ի պէտս ինչ 53 գործոյ.
և յուժգին 54 եղեալ տօթոյն, խոր-
հեցաւ հանգչել՝ի մարգճակին
պառատին Եւսեբեայ որ կոչէր Եւ-
խայիտայ 55. և կալեալ զձին կող-
մնեցաւ 56 ընդ հովանեաւ տնկոցն։
Զայն տեսեալ Եւսեբեայ՝ի սրահէ
տնկան իւրոյ 57, կարկառեալ ըզ-
ձեռն աղաղակեաց և ասէ. Ա՜յ
հեծեալ, ա՜յ հեծեալ, մի դադա-
ր իր յայդմ տեղւոջ, զի հուպ է
որջ վիշապի հզօրի 58, և զայսու
ժամու եկանէ և շրջի՝ի մարգճա-
կիդ. գուցէ ինատիս 59 դու կամ
երիվարդ, այլ յարուցեալ եկ՝ի

անիկա իմ, որպէս զի լուացեալ զոտս քո և հաց ճաշակեալ հանգի-
ցես 'ի միջօրէի, և հովուն անկանե-
լոյ 60 երթիցես զճանապարհս քո։
Պատասխանի ետ երանելին Թէոդո-
րոս և ասէ. Ես յուսալով յօգնա-
կանութիւնն Աստուծոյն իմոյ՝ յան-
երեւոյթ վիշապէն ոչ երկնչիմ,
թող թէ յերեւելի օձէն. ելցէ ըստ
բանի քում և ատակեցից զնա ա-
նուամբն Քրիստոսի։ Իսկ բարե-
պաշտն Եւսեբի լերեւ լուաւ թէ
զՔրիստոս անուանեաց, և իմա-
ցեալ եթէ հաւատակից իւր է, 'ի
խնդութենէն իւրովն 61 ընթացեալ
ընդ առաջ նորա, և քուռն հարեալ
աղաչէր դնալ անսի, և երթալ
ընդ նմա 'ի տունն իւր 62։ Եւ մինչ-
դեռ նա զայն խօսէր՝ եղեւ յան-
կարծակի շարժումն մեծ յոյժ և
շաչիւն գալոյ վիշապին 63. զոր
փութանակի զգացեալ երանելւոյն
Եւսեբեայ ճիչ բարձեալ 64 մե-
ծաձայն, և վիշապն քաջալանչ և
մեծապարանոց եղեալ 65 յարձա-
կեցաւ 'ի վերայ երիվարին ահագին

և անզգամ շնչմամբ յոյժ։ Յայն-
ժամ երանելին Թէոդորոսի կրն-
քեալ զինքն նշանաւ ամենայաղթ
խաչին 66 Քրիստոսի հարկանէր 67
նիզակաւն զգլուխ վիշապին և շեշ-
տակի Ճեղքեաց և առժամայն սա-
տակեաց զնա. որոյ տապալեալ 68
յեղեգանն որ հուպ 'ի ջուրն՝ իբ-
րեւ զգերան անարի յոյժ ահագին
տեսողացն երեւէր։ Յայնժամ եղեւ
ծանօթութիւն և սէր բարեպաշտին
Եւսեբեայ առ երանելին Թէոդո-
րոս 69 որպէս առ յիւրմէ ծնեալ
որդի։ Բայց երանելին Թէոդորոս
ոչ դադարէր 'ի զօրացուցանելոյ
զհաւատացեալս իւր զհեծեալս, և
ուսուցանէր վասն անուան տեառն
Յիսուսի Քրիստոսի, զի յայտնի որ-
պէս զնայն ընկալցին 70 զհաւատն
'ի միտս հաստատունս՝ անպարտելի
մնալ 'ի հակառակորդացն 'ի յոյն
բարեպաշտութեան, 'ի Քրիստոս
Յիսուս 'ի տէր մեր. որում փառք
յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Այս 71 է պատմութիւն և սկիզբն

շինութեան Ամասիայ քաղաքիս, և սրբոյն Թէոդորոսի. բայց զնահատակութիւնն 'ի Յայսմաւուրքն գիտ և կարդա։ Ի թագաւորութեան Հայոց գրեալ Ճաւընակիր գտեալ՝ օրինակեցաք զպատմութիւնս զայս։

Մաքսիմիանոս և Մաքսիմիոս 72 թագաւորք առաքեցին 'ի հնազանդեալս իշխանութեան Լուրեանց և սաեն. Ամենայն քրիստոնեայ որ Ճաշակեացէ 'ի զոհից՝ կեցուցէք, և որ ոչ կամիցի զոհել կամ Ճաշակել, չարաչար դատաստանաք դատեցարուք։ Եւ 'ի ժամանակին յայնմիկ ըմբռնեցաւ Թէոդորոս յաշխարհէն արեւելից ընդ այլս բազումս, և անուն գեղջնորա Սաբուէ. և եկն 'ի գունդն կոչեցեալ Մարացւոց. և յիշխանութեան սենեկապետին 73 Բերենիկեայ էր քաղաք մի, զի անուն էր նորա Ամասիա մօտ 'ի Պոնտոս քաղաք, և գունդն նստէր յԱմասիա։ Եւ ածին զերանելին Թէոդորոս և ասէին զոհել պիղծ

կռոցն։ Իսկ նա իբրեւ հաւատա-
ցիմ ծառայ Աստուծոյ լցեալ Հոգ-
ւով սրբով կայր 'ի մէջ բազմու-
թեանն, և ասէր. Ես քրիստոնեայ
եմ, և զոհել պղծոց ոչ հաւանիմ։
Բրինկաս սենեկապետ ասէ. Ա-
զգէն զինուորութեան քո և զամե-
նայն զօրս իմ, և հանդերձ բազում
պատուով երթ և զոհեա աստուա-
ծոցն մերոց, և առնիս սիրելի թա-
գաւորին։ Թէոդորոս ասէ. Զօրա-
կան եմ ես իմում թագաւորին
սեառն Յիսուսի Քրիստոսի, և այ-
լում զօրական ոչ կարեմ լինել։
Բերենիկէս սենեկապետ ասէ. Եւ
սոքա ամենեքեան որ կան ասա
քրիստոնեայք են և զինուորեալ։
Պատասխանեալ երանելւոյն Թէո-
դորոսի և ասէ. Իբրաքանչիւր ոք
գիտէ, որպէս և կամի զինուորի. Ես
զնմն գիտեմ ում զինուորեալն եմ
թագաւորին անմահի, և այլում
զինուորել ոչ կամիմ, բայց միայն
Աստուծոյ մերոյ երկնաւորի, և որ-
դւոյ նորա սեառն և փրկչին մերոյ
Յիսուսի Քրիստոսի։ Պոսիդոնիոս

դուկենալիոս ասէ. Եւ Աստուածն
քո որդի՞ ունի։ Թէոդորոս ասաց.
Այո ունի զբանն Ճշմարտութեան,
որով զամենայն ինչ արար։ Պոսի-
դոնիոս զառաջաւոր ասէ. Մէք կա-
րեմք Ճանաչել զնա։ Թէոդորոս ա-
սէ. Մարդասէրն Աստուած եւ
մեզ իմաստութիւն զի ծանիցուք
զնա. երանի՛ թէ և ձեզ տայր զայն-
պիսի իմաստութիւն Ճանաչել զնա,
զի մեծ օգուտ էր ձեզ։ Պոսիդոնիոս
և Բերենիկէս ասացին. Եթէ դառ-
նամք առ նա, չեմք բաւական թող-
ուլ զթագաւորն մեր և հաւատալ
'ի նա։ Թէոդորոս ասաց. Ոչինչ
կարէ ոք խափանել զձեզ 'ի թողուլ
զնաւար և դիմել առ լոյս, և զառժա-
մանակեան համարձակութիւնդ որ
առ մահկանացու թագաւորն ձեր՝
'ի բաց ընկենուլ և դառնալ յԱս-
տուած կենդանի և անապառ հա-
մարձակութեամբ Ճանաչել ձեզ ըզ-
թագաւորն անմահ, և զինուորել
նմա յաւիտեան որպէս և ասեալ։
Բերենիկաս սենեկապետ ասէ. Ա-
ղէ տեսցուք այսպէս առնել. տա-

ցուք նմա թողութիւն սակաւ ա-
ւուրս, որպէս զի խրատեսցէ նա
զինքն և զայլս և իւրովին եկեսցէ
յօգտակարութիւն իւր. այլ և զայս
կասկածեմ, գուցէ և վաղիւ ոք ըզ-
մեզ նախատիցէ: Բայց ազէ տես-
ցուք և վասն այլոց բազմաց որ են 'ի
նոյն կրօնս:

Եւ առեալ նորա զներուումն, այ-
նուհետեւ առեալ զհասակակիցսն
իւր խրատէր: Մոլեալ անօրինացն
ըմբռնեալ ածին 'ի միասին, և նոքա
մերձենային առ սուրբն Թէոդորոս,
և կարդային զնա վարդապետ. իսկ
նա զհետ գայր և մեծաձայն աղա-
ղակեալ ուսուցանէր նոցա զճանա-
պարհն փրկութեան և համբերու-
թեան, որպէս զի մի ուրացին ըզ-
Թագաւորն Քրիստոս: Իսկ սուրբ
նահատակացն արդելեալ 'ի բանդին
վասն անուանն Քրիստոսի. և ե-
ղանելոյն Թէոդորոսի գտեալ ժա-
մանակ բարի և պարապարդ վասն
տաճարին հայրենի, ուր կային առ-
տուածք նոցա, երթեալ 'ի գիշերի
հրձիգ արար: Եւ տեսեալ ոմանց

մինչ դեռ այրէր, և ամենապարեալ կալան զնա։ Եւ ի դիս 74 քաղաքապետ երկուցեալ 'ի վերայ իրացն, ամբաստան եղեալ հանդերձ զինուորքն, ասեն ցնա. Ա՞յ չարամահ չարագուրթ և անողորմն, զքաղաքս ձաղ 75 արարեր, զտաճարն հայրենի այրեցեր, և զաստուածսն մեր թշնամանեցեր։

Եւ առեալ զերանելին ածին առ դատաւորն Պոպղիոս ստրատոնացի, ուսուցանելով այսպէս. Այրս այս նորեկ 76 'ի քաղաքիս մեծ ոճիրս գործեաց, զտաճար մեր աստուածոցն հրձիգ արար, և թշնամանեաց զաստուածսն մեր. իսկ իմ ըմբռնեալ զդա ածի առ մեծ իշխանութիւնդ, որպէս զի ընդ յանդուգնն գործոյն պատուհասի արժանի արասցես, զի ամենայն ոք գիտասցէ թէ չար մահու արժանի է դա։ Դատաւորին կոչեալ զԲերենիկաս սենեկապետն ասէ ցնա. Դու եղուր դմա ժամանակ թողութեան. զի յօժարեսցի և հրկէզ արասցէ զտաճար աստուածոցն մերոց։ Բերենի-

կաս ասէ. Եւ բազում անգամ ա-
ղաչանօք խրատեցի զնա, զի հաւա-
նեսցի, և վասն այնորիկ եառու նմա
թողութիւն, զի զմտաւ ածեալ զո-
հեսցէ. արդ եթէ նա արհամար-
հեաց զհրամանս մեր, և քամահեաց
զաստուածն, և ընտրեաց զիւրն՝
ես զի՞նչ առնեմ. դու այսուհետեւ
զհրամայեալսն քեզ արա: Եւ դա-
տաւորին նստեալ յաթոռ ատենի,
հրամայեաց ածել զԹէոդորոս. և
եկեալ երանելւոյն, ասէ ցնա դա-
տաւորն. Ընդէր զայդ արարեր.
փոխանակ երկիր պագանելոյ քո
աստուածոց մերոց և խուսկա անու-
շունս մատուցանելոյ, հրկէզ արա-
րեր: Թէոդորոս ասէ. Զոր արարի
ոչ ուրանամ, փայտ մատուցի յաս-
տուածն ձեր, և խբրեւ հուր եղեւ
փայտն, և վառեցաւ զնմանէ. և ձեր
աստուածուհին այնպիսի էր որ հուր
մերձենայր 'ի նա. գիտասջիք զի
'ի հուր գեհենին մատնելոց են աս-
տուածքն ձեր, և ընդ նոսին կորն-
չելոց էք հոգւով և մարմնով յան-
հէջ կիզմանն յաւիտեան:

Եւ դատաւորն հրամայեաց արկանել զնա 'ի տախտապար, և գանել յոյժ, և ասէ ցնա հեզ բանիւք խրովք. Եւ այլոց եւս քաջալերէիր դու և համարձակութեամբ առնէիր. այսուհետեւ չար դատաստանօք դատեցայց զքեզ, և տաց քեզ թագաւորական հրամանաց ծառայել։ Թէոդորոս ասէ. Ոչ այդու բանիւք հաւանեցուցանես դու զիս, և ոչ 'ի տանջանաց զանգիտեմ ես. և եթէ այլ եւս ահիւ դատաստանս ածես 'ի վերայ իմ՝ չերկնչիմ, զի յոյս ապաստանի առ Աստուած եդեալ եմ, որ տայ ինձ համբերութիւն, և փրկէ զիս 'ի քոյին խաբէութենէդ։ Դատաւորն ասէ. Զոհեա, և երթ փրկեա 'ի տանջանացդ։ Թէոդորոս ասէ. Ոչ են տանջանքս այս յաւիտեան. քանզի տէրն իմ և թագաւորն Յիսուս Քրիստոս առաջի աչաց իմոց է, և փրկէ զիս 'ի տանջանաց քոց զոր մատուցանես. և դու զնա ոչ տեսանես, զի կոյր ես, և ոչ տեսանես զանձին քո չար։ Զայս իբրեւ լուաւ

դատաւորն բարկացաւ յոյժ , և մանչեաց Իբրեւ զառիւծ , և հրամայեաց արկանել զնա 'ի բանդ , և կնքեալ զդուրս բանդին , զի 'ի սովու և 'ի ծարաւու մեռցի : Իսկ Երանելին Թէոդորոս կերակրէր 'ի Հոգւոյն սրբոյ . և 'ի գիշերին յայնմիկ երեւեցաւ տէրն մեր Յիսուս Քրիստոս և ասէ ցնա . Թէոդորոս քաջալերեաց , զի ես ընդ քեզ եմ , և մի առնուր կերակուր ինչ 'ի մարդկանէ . զի քեզ պատրաստեալ են կեանք երկնաւորք . և զայս ասացեալ փրկչին վերացաւ 'ի նմանէ . և 'ի գնալն սեառն սուրբն Թէոդորոս սկսաւ սաղմոսել և ասել ուրախութեամբ զսաղմոսն , և էին բազմութիւն որ կցորդէին 77 սաղմոսին : Իբրեւ լուաւ զայս բանդապետն , յարեաւ ընթացաւ 'ի դուրս բանդին , և եառեալ զդուրսն փակեալ և կնքեալ , և յեռաւ ընդ պատուհանն , և եառեալ զի բազումք էին ընդ նմա սպիտակազգեստք 78 , և սաղմոսէին ընդ Երանելւոյն Թէոդորոսի . և յերկեւղէն գնաց և պատ-

մեաց դատաւորին : Եւ յարուցեալ գայր դատաւորն 'ի դուրս բանդին, և ետես զդուրսն փակեալ և կըն-քեալ, և զձայն սաղմոսին՝ լսելի լի-նէր հանդերձ երանելեաւն Թէո-դորոսիւ : Եւ հրամայեաց զօրակա-նացն շուրջ զբանտիւն պատել. և կային կազմ զինու, կարծելով եթէ քրիստոնեայք իցեն ընդ Թէոդորո-սի. և իբրեւ բացին նոքա զդուրս բանտին, ոչ զոք գտին, բայց միայն զծառայն Աստուծոյ զԹէոդորոս սնդեալ 'ի կոճեղս. և անկաւ ահ մեծ 'ի վերայ դատաւորին և որ ընդ նմայն էին : Եւ հրամայեաց դատա-ւորն տալ նմա զուլթերորդ մասն նկանակին, և զուլթերորդ բաժին ջրոյ դորակի միոջ : Իսկ երանելի նահատակն Աստուծոյ ըստ գրեցե-լուն որ ասէ, եթէ Արդարն 'ի հա-ւատոց կեցցէ, ոչինչ կամեցաւ առ-նուլ կերակուր ինչ 'ի նոցանէ, այլ պատասխանեալ ասէ ցնոսա. Զիս կերակրէ տէրն իմ և Թագաւորն, բարերարն և ողորմածն :

Եւ իբրեւ առաւօտ եղեւ հրա-

մայեաց դատաւորն ածել զսուրբն, և ասէ ցնա. Թէոդորէ, հաւանեա ինձ, և զոհեա աստուածոցն առանց չարչարանաց. երդուեալ ամենայն աստուածովքն, զի Թագաւորացն գրով հաստատեմ զքեզ տէր աշխարհիս, և քահանայապետ աստուածոցն, և աթոռակից տէրութեան իմոյ, և մեծամեծ պարգեւս ընկալցիս յինէն։ Իսկ երանելին համբարձ զաչս իւր յերկինս, կընքեաց զինքն և ասէ ցբռնաւորն. Սարսնոյս ունիս իշխանութիւն, եթէ 'ի հուր արկանես, եթէ գազանաց մատնես, և եթէ այլ բազմազան տանջանօք վատնես 79 զմարմինս իմ, մինչեւ է շունչ յունգունս իմ, ոչ ուրանամ զանուն տեառն Աստուծոյ իմոյ Յիսուսի Քրիստոսի։

Յայնժամ 'ի խորհուրդ կոչեաց դատաւորն զԲերենիկաս սենեկապետ, և ասէ ցնա. Զի՞նչ արասցուք զայրս զայս. և հրամայեաց կախել զնա գլխիվայր, և հարկանել փշալից գաւազանօք, և հարին զնա մինչեւ քանցեցան մարմինք նո-

րա . և ակնարկեաց դահճացն քե-
ռել զնա . և այնչափ քանցեցին
զնա , մինչեւ մերկացելոց կողնցն
մարմինքն անկանէր յերկիր . և
լեարդն Թոքունքն հանդերձ երեւէր
արտաքս : Իսկ երանելին Թէոդորոս
ոչ ինչ տայր պատասխանի , այլ յա-
ղօթս կայր , և ասէր . Օրհնեցից ըզ-
քեզ տէր յամենայն ժամ , հանա-
պազ օրհնութիւն քո 'ի բերանի ի-
մում : Իսկ դատաւորն խբրեւ լսէր
զայս , կայր զարմացեալ ընդ հա-
մարձակութիւն 80 սրբոյն : Եւ ասէ
ցնահատակն երանելի . Ո՞չ ամաչես ,
ա՛յ տառապեալ քան զամենայն մար-
դիկ . զի 'ի մարդ ունիս զյոյս քո և
մանաւանդ 'ի բռնամահիկ . այնպէս
անբան ես մինչեւ այդպիսի տանջա-
նաց զքեզ մատնեցեր : Իսկ երանե-
լի նահատակն Թէոդորոս ասէ ցնո-
սա . Այս ամօթս ինձ եղիցի , և ա-
մենայն մարդոյ որ երկնչի յԱստու-
ծոյ , և կարդայ զանուն տեառն Յի-
սուսի Քրիստոսի :

Եւ ամբոխն 'ի հեռաստանէ կա-
ցեալ աղաղակէր վաղվաղակի կորու-

սանել զնա։ Եւ դատաւորն դարձեալ յղեաց զկնի զԿիւրդիկոն դահիճ և ասէ. Սա նմա զոհեա. և երթ թափեաց՝ի տանջանացդ յայդցանէ։ Իսկ սուրբ վկայն Ճշմարիտ՝ համարձակեալ Քրիստոսիւ ասէ ցբռնաւորն. Ա՛յ ամպարիշտ և ապիրատ, լի ամենայն անիրաւութեամբ և թշուառութեամբ, որդի սատանայի, ժառանգ դժոխոց, և գրաւական դեհենին, մինչեւ յե՞րբ ոչ երկնչիս յԱստուծոյ շնորհողէն քեզ զայդպիսի իշխանութիւնդ. ոչ ամաչես, այնքան յիմար ես և ոչ խմանաս թէ թագաւորք Աստուծով ունին զթագաւորութիւնս, և դատաւորք զտէրութիւն։ Եւ դու զիս բռնադատես թողուլ զԱստուած կենդանի. և երկիր պագանել անշունչ պատկերաց։ Յայնժամ դատաւորն ասէ ցսուրբ վկայն Թէոդորոս. Զի՞նչ կամիս, այսուհետեւ ընդ մեզ լինել թէ ընդ Քրիստոսին քում։ Իսկ սուրբ վկայն պատասխանի ետ ուրախութեամբ և ասէ. Ես ընդ Քրիստոսին խմեալ էի, և եմ, և եղէց յաւիտեան։

Յայնժամ տեսեալ բռնաւորին եթէ ոչ ինչ կարէ օգնել նմա դատաստանաւն և տանջանօքն, իբրեւ եռեռս զհամարձակութիւն նորա, եւ հրաման վճիռ վասն նորա այսպէս. Թէոդորոս ոչ հաւանեալ բարեյաղթ թագաւորաց և աստուածոցն, այլ հաւանեալ Յիսուսի Քրիստոսի 'ի պահել զաւանդ նորա, որ խաչեցաւ առ պոնտացւով Պիղատոսիւ, որպէս լուայ, զսա հրամայեմ հրկէզ առնել, որում և արժանի իսկ է: Եւ սպասաւորացն վաղվաղակի պատրաստեալ զհուրն 'ի փայտից որ 'ի սէտս բաղանեաց և կամ այլ ինչ իրի, լցին զսէտս իւրեանց: Յայնժամ հրամայեաց դատաւորն զփայտիւ արկանել և տանել 'ի հուրն. և ածին զերանելին ուր հրամայեցաւ, և կամէին հանել 'ի նմանէ մերկանալով զսպարեգօտս նորա և լուծանել զգօտի նորա. զայս առնէին զի փորձէին զնա. իսկ երանելին փութայր ինքն զինքն արկանել 'ի հուրն: Իսկ յորժամ հուրն պատրաստեցաւ, 'ի բաց եդեալ ըզ

հանդերձն իւր , և լուծեալ զգօ-
ային , կամէր և զոգ ոտիցն հանել.
զի յառաջագոյն զայս չէր արա-
րեալ : Եւ ընթանային իւրաքանչիւր
ոք 'ի հաւատացելոցն փութալով
մերձենալ 'ի քրտունս նորա . և վաղ-
վաղակի պատրաստեցին առ հուրն
զգործարանն , և կապեցին և կա-
մէին հեղուսել ընդ փայտ մի և ըն-
կենուլ 'ի հուրն , և ասէ նա ցդա-
հիճան . Թոյլ տուք ինձ , զի որ ետ ինձ
համբերութիւն , նոյն ինքն կարող
է և առանց աշխատութեան պահել
զիս . յայնժամ ոչ բեւեռեցին զնա ,
այլ միայն կապեցին : Իսկ երանե-
լին տեառնագրեաց զինքն 'ի Հոգին
սուրբ . և գային ածէին զնա իբրեւ
զգառն 'ի պատարագ , և իբրեւ ըզ-
խոյ յողջակէզս : Համբարձ զաչս
իւր յերկինս և ասէ . Տէր Աստուած
ամենակալ , որ սիրելոյն քո և օրհ-
նելոյն տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի հայրդ ես , որով զքո գիտու-
թիւնդ ընկալաք , որ կոչեցեր զիս 'ի
զօրութիւնդ քո , Աստուած զօրու-
թեանց , և ստեղծիչ ամենայն արա-

ըածոց և ամենայն կենդանեաց որ
կան առաջի քո, օրհնեմ զքեզ՝ որ
արժանի արարեր զիս այսօր խառ-
նել 'ի գունդս սուրբ վկայից քոց,
և կցորդ բաժակի տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի, և հաւատալ 'ի
յարութիւն և 'ի կեանն յաւիտե-
նից շնչով և մարմնով անապակա-
նութեամբ հոգւոյն սրբոյ։ Եւ ա-
հա եկեալ եմ իբրեւ զոչխար 'ի
սպանդ, զի ընկալեալ եղէց առաջի
քո այսօր պատարագ պարարտ և ըն-
դունելի, որպէս պատրաստեցեր
յառաջագոյն և կատարեցեր ան-
սուտ և ճշմարիտ Աստուած. վասն
այսորիկ օրհնեցից զքեզ և փառա-
ւորեցից 'ի ձեռն քահանայապետիդ
մերոյ Յիսուսի Քրիստոսի սիրելի
որդւոյ քո։ Տուր ինձ զօրութիւն և
խմաստութիւն, և շնորհեա կատա-
րել զընթացս իմ քրիստոնէութ-
թեամբ, և առնուլ զնշան յաղթութ-
թեան քո։ Պարգեւեա տէր և զոք
ընդ իս ըմբռնեցան 'ի Տիւրոնէն՝ զի և
նոքա ճշմարիտ հաւատով 'ի խոս-
տովանութեան անուան քո կատա-

րեալ յաղթեացեն հակառակամար-
տին, և ընկալցին 'ի քէն զանթա-
ռամ պսակն։

Եւ համբարձեալ զաչս իւր 'ի
բազմութիւնն և ետես անդ զԿալի-
նիկէ, որ և զնա և զսա 'ի միասին
ածեալ էր 'ի Տիւրոսէն, աղաղա-
կեաց և ասէ. Կալինիկէ, քեզ մնամ
փութա հասանել ինձ. քանզի որ
յապականելի 81 աշխարհիս ոչ թո-
ղաք զմիմեանս, այնպէս և 'ի կեանն
յաւիտենից մի թողցուք զմիմեանս.
և կատարեալ զբանն, սկսաւ դար-
ձեալ աղօթել այսպէս. Տէր Յի-
սուս Քրիստոս, որ միջնորդ ես
Աստուծոյ և մարդկան, որ արժանի
արարեր զիս զտառապեալս յաղ-
թել բռնաւորիս այսորիկ, և կա-
տարել զհանդէսս զայս խոստովա-
նութեամբ անուան ամենասուրբ
Երրորդութեանդ. գոհանամ զքէն
տէր իմ Յիսուս Քրիստոս, և առա-
ւել գոհանամ և այժմ և յան-
սպառ յաւիտեանն։ Ընկալ տէր
զհոգի իմ խաղաղութեամբ, զի փա-
ռաւորեացի յիս սուրբ անունդ հօր

և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ, յիս տառապեալս որ գտի 'ի քէն զանապատ ողորմութիւն քո, և առաւելեալ եմ 'ի շնորհաց քոց պարգեւս։

Եւ կատարեալ զաղօթսն առաւել բորբոքեցին զհուրն. և վառեալ հնոցին ելանէր բոցն մինչեւ յերկինս։ Եւ իբրեւ եմուտ 'ի հուրն, զարմանս մեծամեծս տեսաք, որոց տուեալ էր տեսանել 'ի Հոգւոյն սրբոյ. զի հուրն կամարաձեւ էղեալ իբրեւ զխորան եկաց 'ի վերայ սրբոյն. և իբրեւ զառագաստ նաւի հողմուռոյց գոպ առեալ շրջապատեաց զմարմնով նորա. և կայր երանելին 'ի մէջ հնոցին ոչ իբրեւ զմարմին մարդոյ այրեցեալ, այլ իբրեւ զհաց խորովեալ, և իբրեւ զվարդ անուշահոտ. և օրհնէր մեծաձայն և փառաւորէր զԱստուած 'ի մէջ հնոցին և ասէր. Փառք քեզ Հայր սուրբ, փառք քեզ Որդիդ սուրբ միածին, փառք քեզ Հոգիդ Ճշմարտութեան, սուրբ Երրորդութիւնդ, մի աստուածութեանդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Եւ ա-

սացեալ զամէնն, զորէն փչման արձակեաց զՀոգին 'ի ձեռս Աստուծոյ. և տեսաք զՀոգին նորա, զի իբրեւ զփայլակն վերացաւ յերկինս:

Իսկ կին ոմն բարեպաշտօն զի անուն էր նորա Եւսեբի մեծատուն յոյժ, խնդրեաց զմարմին նահատակին Քրիստոսի. գինւով և իւղով կազմեաց զսուրբ նշխարս նորա, և պատեաց 'ի սուրբ կտաւս, և տարեալ 'ի գեւղն Եւքայիտայ և եդ 'ի տան իւրում. զյիշատակն կատարելով 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն:

Կատարեցան երկոքին սուրբ վարկայքն Քրիստոսի Թէոդորոս և Կալինիկէ բարի խոստովանութեամբ յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յամսեան յունիսի յերկրորդում աւուր. 'ի թագաւորութեանն Մաքսիմիանոսի և Մաքսիմոսի. իսկ 'ի մեզ թագաւորելոյ տեառն մերոյ Յսի Քսի, ընդ որում հօր փառք, իշխանութիւն և պատիւ հանդերձ Հոգւովն սրբով. ամէն:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Պարսամ կամ Պարսամոյ ճշգ-
նող հայրապետ Եդեսացի, որիշ
է 'ի Պարսամոյ աստուծոյ սամոս-
տացւոյ։ Գտցեն զայսմանէ խըն-
դրողք լինուլի աւանդեալ 'ի լինա-
կատար վարս սրբոց յ'Ա. Հատ.
378։
2. Ալ օրինակ մրցանաց։
3. Հնագոյնն մարտիրոսաբան։
4. Մեւս օրինակն. հմուտ գուշակ գի-
տուն հին և նոր կտակարանաց՝ ո-
ւսեալ 'ի մանկութենէ։
5. Մեւս օրինակն պատանոմատ։
6. Մեւս օրինակն փիրակն։
7. Յաղագս Ագապին ակնարկեն
բանքս, որոյ սովորութիւն յա-
ճախեալ էր առ նախնի քրիստո-
նեայս։ Զորմէ տես և յ'Բ հատ.
Սոփեր. 97։

8. Մեւան կորէլ։
9. Հնագոյնն՝ մոլար սպոնիան։
10. Ըստ հնոցն սովորութեան զանց առնէ ասասէն յիշատակել զԲՐՂ-խուսն Հոգւոյն սրբոյ և յՈրդւոյ։
11. Հնագոյնն՝ բանակաց։
12. Մեւան՝ բնութեամբ։
13. Մեւան՝ պրամախոհական։
14. Մեւան՝ բնակելնորին Սարգսի։
15. Հնագոյնն հայել։
16. Մի օր. բաղմաբի-ը յոգնանաս-պուածութեամբն։
17. Մի օր. յԱմասիայ .... երեք օր. Նէփսուէայ։
18. Երեք օր. հապուած եղէալ։
19. Երեք օր. 'ի մեջ։
20. Մի օր. աստ ուս հոսի Իսիս. իսկ մեւան՝ աստ ուս կուլի Գայլ գէպ։
21. Մի օր. ընդ մեջոյն փարաղերանց անցանելով ընդ Լիկոս խառն. մեւան ընդ մեջ փարաղերանց։
22. Երկու օր. մոլեկան պնդութեամբ մուրեամբ 'ի Սկիսուիոն դաղաք։
23. Մի օր. Մարմասիոն։
24. Մի օր. Եղէնոս Պոնպոսի 'ի մեջոյս փարաղերանց. մեւան 'ի Պոնպոսի։

25. Մի օր. ապգ առնլով. մեան դադարէալ ասպ:

26. Այդպէս երկու օր. իսկ յայլ օրինակս պակասէ վերջի հատածն:

27. Մի օր. ընդ հիւսիսակողմն գնոյն:

28. Մի օր. առ սպորոպով փարպէան յանկինդ ի նախապատուիթիւն հասպարեալ....

29. Երկու օր. մեծամեծօք համարիր. այլ օր. հասպարիր կանգնեալ վիմօք:

30. Մի օր. կայսրանէ:

31. Մի օր. փարաքոր:

32. Երկու օր. իրաժոյս:

33. Մի օր. Բաղնարիգեիայ. ղը: Զայսմանէ վկայէ և Յովհ. կաթողիկոս 'ի Պատմագրութեանն նորում այսպէս. "Այս Մեհրը-
" դատ երթայ ունի եւս և զԱ-
" մասիա, որ բազում ամօք յա-
" ռաջ շինեալ էր յԱմասիայ
" յեղբօրորդւոյ Նեքտանեբայ
" հրամանաւ Աղեքսանդրի որ-
" դւոյ Նեքտանեբայ, և ընդարձ-

՝՝ ձակագոյնս զնա պարսպէաց,
՝՝ և գրաւելով զնա 'ի Հայս՝ տիե-
՝՝ զերասահման քաղաք զնա յար-
՝՝ դարեալ կոչէ. շինէ 'ի նմա և
՝՝ արքունիս ըստ հիւսիսոյ կող-
՝՝ մանէ Ռիս գետոյ. իսկ յարե-
՝՝ ւելից դիմակի քարանձաւին
՝՝ շիրիմն քարակոփս և տունս
՝՝ բրածոյս յօրինէ համանման
՝՝ ձեռակերտին Շամիրամայ որ
՝՝ 'ի Վան և 'ի Խազնաթգեղբայ՝՝:

34. Մի օր. փէրէոյն.. երկու օր. փէրաոյան. մի օր. ժամանակ:

35. Երկու օրին. Եղէնոս Պոնպոսի. մեւան ՚Եղէոս Պոնպոս մեպոռոպոլիպ ուրբեալ:

36. Երկու օր. կուրծէօփ:

37. Երկու օրին. նոր:

38. Մի օրին. Փէդէմէոս. մեւան՝ ՓէՌէմոն. վերջինն գրեալ էր յըստորեւ Փէփէմոս:

39. Երկու օրին. և Թերի օր. ղողեալ ուրուէոյն:

40. Մի օրին. Ռաֆաուրփն:

41. Մի օր. 'ի դոպաուրէն... մեւան՝ 'ի դոպաուրայն:

42. Մի օրին. և թերին ուներին։
43. Երկու օրին. և համարյակամարպ էին կամ լինիցին.... պատգամն դից. թերին՝ փաղանեամբ արհամարհեն։
44. Մի օրին. Սաբոբէայ. մեւան՝ Սաբոբէ։ Իսկ թերին՝ 'ի փաղաքին Ասորբէա։
45. Մի օրին. յաւելու կուլեցեալ։
46. Մի օրին. և հայրն անուանելով. իսկ մեւան՝ ընդու ինա հօրն անուանել։
47. Մի օր. և հապիւն և հապաջրան։
48. Մի օր. պարգացեալ ապանլելի վարոփ, պմանիուինն վարեր ասորբ պգասպ և պարկեպ յամենայնի։
49. Մի օր. և թերին յապիս հանակի.... մի օրին. մարուօփ խորադիմօփ։
50. Երկու օր. ընուխ գուլով։
51. Մի օր. պոր մի-ասուն կնոքեալ. իսկ մեւան՝ պոր փեսեալ ինա արու։
52. Մի օր. յաւելու յինոքեան։
53. Մի օր. յաւելու ի՞ր. թերին ասա պէպս ի՞ր։
54. Մի օր. նեղեալ. մեւան՝ եղելոյ 'ի։

55. Թերի օր. Եւ-փոփիա։

56. Մի օր. կապեալ ղՅիսուն անկա-. մեւան՝ ղՅին անկա-. Թերին և նոպա։

57. Մի օր. 'ի պանէաց արահին. մեւան՝ 'ի արահէն իւրմէ։

58. Մի օր. հոգ է որչացեալ վիշապ հղօր. իսկ մեւան. հոգ է այդը որչ վիշապի անարաց։

59. Մի օր. ֆասիոն. Թերի օր. ֆասէոն։

60. Մի օր. յովանկեալ. երկու օր. հովան անկելոյ։

61. Մի օրին. յաւելու ուրախացեալ։

62. Մի օր. պանին։

63. Մի օր. գալ վիշապին. մեւան՝ որպէս խաղի՝ գայլոյ վիշապին։

64. Թերի օր. յաւելու ելող ջնա և փոխեա։

65. Մի օր. վիշապին... էղեալ. Թերին լայնապարանոց։

66. Մի օր. խալին։

67. Մի օր. հանէ։

68. Թերին ասալեալ յեղեգն։

69. Մի օր. ընդ արբոյն Թէոդորոսի. մեւան՝ և արբոյն Թէոդորոսի։

Մի օր. կալոյին պահապան հաստատուն :

71. Մի օրինակ յաւելու աստէն զկարճառօտ յիշատակարանս :

72. Երեք օր. աստ և յստորեւ ունին Մոփսինպէս :

73. Թերի օր. անէնիապանին :

74. Թերի օր. Ա դէոն :

75. Թերի օր. ծաղր արարէր :

76. Թերի օր. Նուրակերպ :

77. Թերի օր. Հոուդ լինէին :

78. Թերի օր. ապիպակուզիաց :

79. Այլ օրին. ապանէոյէս :

80. Թերի օր. համբերութիւն :

81. Այլ օր. այպանելի :

Ց Ա Ն Կ

ԺԶ. ՀԱՏՈՐՈՑ

Ներսեսի Շնորհալւոյն պատասխանի Թղթոյն Գէորգեայ առաջնորդի սրբոյ ուխտին Հաղբատի յաղագս պատմութեան երանելւոյն Սարգսի . 5
Վկայաբանութիւն սրբոյն Սարգսի զօրավարի և որդւոյ նորա Մարտիւրոսի 11
Պատմութիւն Ամասիա քաղաքի, և յաղագս սննդեան և վարուց սրբոյն Թէոդորոսի զօրավարին 55

ՍՈՓԵՐՔ

ՀԱՑԿԱԿԱՆՔ

ԺԷ.

SDu